Գեղարվեստական, Գրական, Հասարակ., Քննադատ., Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քառասնօթներորդ տարի ՕԳՈՍ.-ՍԵՊՏ.-ՀՈՒԻՍ. **№ 8-10 — 1916 — XXVII**

Тифлис, Редакция „ТАРАЗ"— Tiflis (Caucase), Direction „TARAZ"

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ձեռագրերը փոխադրելուն և չը տպելիքը (երեք թերթից աւելաս) չի վերադարձնում։

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ ԵՐԵՔՇԱԲԹԻ եւ ՈՒՐԲԱԹ առ. ժ. 11—12։

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուս. ՏԱՐԱԶ-ի յայտարարական տողը տառչին երեսը 40 կոպ., հրջիները՝ 25 կոպ. մանրատառ (պրեսիա)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնողներն առանձին համաձայնութեամբ։

ՀՂԲԻՐ-ՏԱՐԱԶ ամսական 33 կ. ՏԱՏԱՋ ձեռերկայ №-ը 3 ք.

Խմբագրութիւն — Փիփիս, Գօլօվինսկի պրօսպեկտ. № 41. բաց է ամեն օր (բացի ուօն և կիրակի օրերից առ. 10 և կէս ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։

Голов. пр., 41 Телефон 16—90

ԹԸՔԱՐՆԱԿԻՈՒՄ Է 1916 ԹՒԻ ԲՕՓԵՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՊ ՍՓՓՓԱՆՔ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑՆԵՐԻՆ

Ընդունում են (բայլ ապատատարձնում գիշեր-ցերեկ ամբողջ) փախստական և կրթեւնկ տղայ և աղջիկ, մինչև 10 տարեկան «Հրատապ Սփոփանքի» ՎԱՍՈՒՐԱԿԱՆ և ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ դպրոցներում, որոնց ընդհանուր թիւը 100-ից չը պակաս է անցնել. երեխեկներն էլ սահմանւում են սրնոնով՝ նախաճաշ և հաշ։ Ուսումը առ. 9 ժ. մինչև 5 ժ. երեկ.։ Ընդմիջումներին ժամանց պարապէդի մէջ տատատ տրւում։

Տէր և Տնօրէն Տ. Նազարեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն Կ Ա Տ Ի Ե Ւ

Բեւեռ
Եփրեմ
Ակէօ
Իշխան Նիկօլայ Արղութեան Երկայնաբազուկ
Իշխան Մովսէս Արղութեան-Երկայնաբազուկ
Սահակին վանքի կամարակապ գաւիթը
Տ. Տ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան-Երկայնաբազուկ
Բժ. Ռաչտուբ Բանաթրեան
Վահրամ-բէյ Տատեան
Գաբրիէլ-խան Ալան-Իւզբաշեան
Եկատերինէ Սարաջեա
Արտաշէս Սուճեան
Նունէ Սունդուկեան
Գաբրիէլ Սունդուկեան
Գրիգոր Աբծրունի սկսնակ
Սուրէն Սպանդարեան
Միքայէլ Մալամբկեան
Լ. Բ. Եաւրսկաեա
Բանկետ Իշխան Ալ. Իվ. Սումբաթով Իւժինի պատուին

Շուշան—ա. Վարդուհի
Եֆիմիա—ա. Յասմիկ
Զիմզիմով—Յ. Տէր-Գրիգորեան
Գիզո—Դ. Տէր-Դաւթեան

} *Պէսօն հոկտ.3-ին. Արտիստ. թատր. հաղ. նեբկ.*

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Ուրբաթ, նեբկայ նոյեմ. 4-ին, Թիֆլիսի Կոնտական նոր թատրոնի XX-ամեակի առիթով, թատրոնական գնդատ և բնմական հինաւուրց դարձիչ Իւրի Դմիտրեւիչ Նորեակ յիշողութիւնների «Տեստէթիան Թիֆլիսի թատրոնների անցեալ շուրջ գրոյց և պատշաճ նուագանդէս։

Սկիզբը 9 ժ. երեկոյեան։

Ն Ի Ւ Թ Ե Ր

Վեհ Կաթողիկոսի կոնդակը
Քեւռ (մահդոյժ)
Բողոքը (բանաստեղծ).—Յ. Պետրոսեան
Բացարձակ նամակներ—Տ. Նազարեան
Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներին
Իշխան Ն. Արղութեան-Երկայնաբազուկ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԴԵՐԻՑ ԱՒԱԶ ԵՒ ՅԻՑ
Թիֆլիսական շրջան, 947—Ստրպետ

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ
Բժ. Ռաչտուբ Բանաթրեան
Գաբրիէլ-խան Ալան-Իւզբաշեան
Արտաշէս Սուճեան
Միքայէլ Մալամբկեան

ԹԵՐԹԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ
Նինա Սունդուկեան—Յ. Տէր-Գրիգորեան (վ.)

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՒ
Կ. Պոլսում Գ. Զո՛շկեան

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ
XI-րդ տարեշրջանի բացումը
Ֆաւտուբիում—Մ. Եզեկեան

Թ Ա Տ Ր Ո Ն

Հայ թատրոն
Գարնանային սեզոնը
Ամառնային սեզոնի բացումը

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԻԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆԸ

Մ Ա Հ Ա Ճ Ո Ի Ճ Ա Կ

Գաբրիէլին (Հայրապետ) Ղուկասեան
Եկատերինէ Սարաջեա
Վահրամ-բէյ Տատեան
Սուրէն Սպանդարեան
Օր. Նունէ Սունդուկեան
Հիւանդի մահճակալի մօտ } *Յ. Տ. Գրգորեան (վաս)*
Գաբրիէլի գերեզմանի մօտ }

Ֆ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

Անտագոնիզմ—Դինօվէլ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՆԻԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, Ապր. 24 ին, Վհտափոտ Կաթողիկոսի անանձակոչութիւնն օրը Փիլիսը շատ հանդիսաւոր կատարուեց։ Քաղաքիս բոլոր՝ թէ ազգային պղտրցնելի և թէ պիմոպիտների աշակերտները ազատ էինպարտիզանից և նորին Վսեմութեան Մայր Տաճարում պատարագին, հայապետական հանդիսաւոր մաղթանքին, որ կատարուեց թեմիս նոյ առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսը։ Եկեղեցական հանդիսից յետոյ՝ ազգային-կրթական-կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները գնացին առաջնորդարան, ուր իջևկապետ պ. Բաւտաարեան սրանց կողմից ողջոյնի խօսք ասաց Տ. Մխիթար եպիսկոպոսին, շնորհաւորելով թէ Վեհափառ Կաթողիկոսի անանձակոչութիւնը և թէ բարի գալուստ յայտնելով Տ. Մխիթար եպիսկոպոսին։ Առաջնորդին նորին կայացաւ և քաղաքիս հոգևորականութիւնը, որի անունից ողջունեց կոնսիստորիայի անդամ Տէր-Սարգիս ք. Շիհան։ Տ. Մխիթար եպիսկոպոսը շնորհակալութիւնն հետ յայտնեց, որ ժողովրդի և հոգևորականութեան ջերմակցութիւնը պիտոնանձնածը կատարել։

Ապա աջնորդարանում կայացաւ Վեհ. Կաթողիկոսի Ընդ. Յանձ. նիստը յատնկաց լուսցաւ Նորին Օծութիւնն սրբատառ կոնդակը Յան անդամներին, որ կարդաց Տ. Բենիկ վարդապետը։ Տ. Նազարեանաժանից կոնդակի պատճէնները Յանձ. անդամներին, որոնք ստացին Վեհափառ Կաթողիկոսին իրանց անհուն սիրոյ արդիւնքն արտայայտող հետագիր և շնորհակալութիւն անանձակութեան առիթով։ Վեհափառ Կաթողիկոսից ստացուած Տ. Նազարեի անունով օրհնութեան հետագիր թէ իրան և թէ Ընդ. Յանձ. գամներին, ինչպէս և «Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներին», Աղբիւրի, Տարազի, Վան-Տոսպի խմբագրութիւններին, ակաե-Գեղագիտական Սալօնին։ Նման օրհնութեան հետագիրներ պրոթիւններ ստացել են և այն բոլոր հասարակական-կրթական-կուլտուրական հաստատութիւնները, որոնք շնորհակալութիւն էին նոր Վեհափառութեան անանձակոչութիւնը։

ՄԱՅՈՒՅԱԿ

ՀԱՅՐԱՊԱ (Դարեգին ըՏ)

ՂԱԶԱՐԵԱՆ

Մեր նորյն զպրոցական կեանքի արդյն էր և օրեր Բարում վաստած Գարեգին քահանան, Տաւոր Հայրապետ Ղուկասեանը Շամախու Գիրք վիւղայի, ստեղով սրբ. զպրոցը մուտ և պայծառ կամարի ասկ։ սկսը էին բրանել Ղազարոսդային, Քաչքիրանի եև. կանոն Տէր-Յուսիկ եպիսկոպոսի սրպատիճ (այժմս Տեղակալ սրգան Տ. Յուսիկ արքեպիսկոպ) յաջորդութեան օրով հիմը ու Ալէքսանդրապոլում կրճակ դիտակից, բի դան գործունէութեան։ Մի քանի տողով չկարելի այս շրջանի տաբեների մասին խօսել։ Կը տալենք հանդուցեալ մանկավարժ-քաղաքի, գաւազիւք յօրինո, մատենագրի և լուսշ տիպիկ-կազմակերպի կենսագրութիւնը գտակիրի հետ Տարազ-ի 1914 թ. Ա-ում

ԼՈՌԻ

ՎԱՐԱՍՏԻՑ ՏՈՒԳԱՆ

Տաւոնն լոռիցը յայտնի է ոչ միայն աշխատասիրով այլ և Հաստատամիտ Պարտաւորեալում ու Եռջայում։ Հայերիս յայտնի ու Ազիզեան Տաւոնների վերաբերմամբ էր ասր և դանդաղում է նրանց ստացարերը, որ սեղ հնդիսակից է չարաբաստիկ «16-րդ» յօդուածը։ Տաւոնների պատասը չաճախ են հիւր գնացել սուլթաններն և նշանաւոր պետական ու ազգային գործիչ Պօղոս-բէյ Տաւոներ հարմնելիան է ունել իր երկու չքնաղ աղջիկներըը մեզ՝ Իշխան Ն. Վ. Ռէնբուլիանին և Իշխան Ե. Լ. Արզուտինսկուն։ Տաւոնների փեսաներն էին հայոցն դիպլոմատներ Նարիման-խան, Մելրամխան, Զիչենի կոմս եև։ Ասա ոչ նշանաւոր բնտանիքի անդամն էր և նոքա Թէհրանում վախճանած Վահրամ-բէյ Տաւոնեան։ Սա Զիչենի կոմսի փեսան էր և սահմանել էր պետական ծառայութիւն Պարսկաստանում ու վայելում մեծ յարգանք պարոնց շահերից։

ԵՊԻՇԿՈՊՈՍ Ի. ՍՐԲԱԶՆՈՒՐ

Զգնաղ Վրաստանը այս անցած ամսում մի զոյգ կորուստ ունեցաւ։ Հանգստեան իրենց Թիֆլիս վերադարձին՝ համապարհին վախճանեց ու Ենգադինի Սուրբինան, որ ամուսնու մէկ կենդանութեան ժամանակ և մէկ նրա մահից յետոյ անդնդահոգի եղած է եղել միշտ ազգային-կուլտուրական հաստատութիւններին ու մանկից ընաց՝ Նրան նեղակրել հասել պատճառ մի քանի տիկնոջ և աղջկանց, որոնք ամենքն էլ ընդհանուր ցաւակցութիւն են յայտնել նրա ընտանիքին։

Երէկ Վրաստանի Եկեղեցական Ներկայացուցիչ Եպիսկոպոս Ներսէս Սանդուխեանի ղեկավարութեամբ տեղի ունեցաւ Ս. Ներսէս Մեծի եկեղեցում հանդիսաւոր պատարագ, որին ներկայ էին Վրաստանի բոլոր հոգևորականները, վրաց Թաւադներն, վրաց գրականութեան, ազգայր. եև., եև. ընկերութիւնները։

Դիտակից վրացուհու մահուան առիթով մեր ցաւակցութիւնը յայտնելիք եղբօրը հետևեալ մեր հեռագրով. Զգացումների անսահման հիացմամբ խոնարհում ենք վշտահար վրաստանի դստեր՝ պայծառ Եկատերինէ, Իվանովնա Սարաջեւի սեփհի առաջ, որ այնքան այնքան իմաստուն գիտակցել է թէ հայրենիքի վերածնութեան եւ վերածնութեան փակտորները են գիտութիւնը, գրականութիւնը, արուեստը։

ՍՈՒՐԷՆ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Տարագիր հրատարակիսօս Սպանդար Ալանդարեան՝ օտար երկրի տակ շատ կարճ ժամանակամիջոցում մէկը միւսի հետևից իր աչքից հեռու արաւ հարազատներըը ուսու սև հողին։ Վերջանար հայրը, նա, որ հոգը դրբոշակիրն էր մի մեծ կուսակցութեան, այսօր լրեալ. տխրութիւն մոռացած, մեն-մենակ մնացել է հիւրասէր Փարսոիայում։ Հօր հարազատ դաւակը, վարժուհուհի Սուլէն Սպանդարեանը, բանտ ու տրտոր, տանջանք ու զրկանք ոչինչ համարելով՝ իր դատակիցներին մոխանոյ՝ պայքարից-պայքարեց, մինչև պատնակը ոսկրին հասնելով՝ վերջ տուաւ նրա մահկանացուին։ Սուլէն Սպանդարեան միջնակարգ ուսումն ստացել է Թիֆլիսի 3-րդ կրասիկ գիմնազիայում, ապա մտել է Մոսկուայի լազարեանական ֆակուլտետը և այնտեղից անցել իրատարածանը։ Քոլ մխիթարի ձերբակալուած վշտահար հայրը՝ Սպանդար Սպանդարեան, որ արդին հասարը մահացաւ գիւղական հանդի։

Ա. ՆԱՒՈՅԻ Ֆ. ԱՐՔԱԳԵՂՍԿԱՅԻՆ

† 10 յունիսի 1916 թ, Թիֆլիս

Յունիսի 12-ին գերեզման իջաւ մեր հասարակաց գրամատուրդ Գարբիել Սանդուկեանի ամենասիրելի զաւակ օր. Նանէ Սանդուկեան, որ երկար տարիներ Թիֆլիսի իրական գիմնազիայում ուսուցչուհի էր։ Յուղարկաւորութիւնը գերեզ էին շատ ուսուցիչներ և անհամար աշակերտուհիներ, որ բերել էին անթիւ ծաղկեպ պսակներ իրանց սիրելի ուսուցչուհուն։ Գ. Յովհ. Պատրիարքեան շատ գրաւած գեղեցիկ խօսեց։

Ե.

ՀԻՒՍԻՍԻՑ

ՄԻՋՈՑՈՒԱԼԻՑ ՄԵՐ

Ես միշտ ասած եմ պահել իմ միտքս ազատ։ Ինչպես գիտէք ես ոչ մի ժամանակ չեմ նրա մասնակիցն եղել, որ մեզ շրջապատում է։ Ես միշտ եմ ասել ինձ համար, որ ես ինչպէս մի ուրիշ անկախ անձնաւորութիւն, պիտի կարողանամ գործել ինչպէս ինձ թելադրում է իմ խիղճը։ Ես ոչ մի կուսակցութեան չեմ պատկանում, ոչ մի ընկերութեան։ Ես ինձ համարում եմ ազատ մարդ։ Ես ինձ համարում եմ ազատ մարդ։ Ես ինձ համարում եմ ազատ մարդ

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

ՏԱՐՈՆ

Rédacteur en chef et directeur

TIGRAN NAZARIAN

Թիֆլիս № 8—10 ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ 1916—XXVII TFILIS

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱՏԱՌ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ

Անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգային նախամեծար Սթոռոյ Սրբատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ ԷՋՄԻԱԾՆԻ

Մեծարոյ Նախագահի Յանձնաժողովոյն ընդունելութեան Մերոյ ի ժամանելն ի Տփխիս և ի յանգիլն Մեր առ Տիգրանայ Նազարեան, որպէս և պատուական անդամոց նոյն Յանձնաժողովոյն Արժ. Տ. Գիւտ աւագ քահանայի Աղանեան, Մեծարոյ Աթաբէգեան Միքայէլի, Աւան Իւզբաշեան Դաւիթ խանի, Արամեան Միքայէլի, Աբաղեան Յովսէփոյ, Ազարաբեան Յակովբայ, Առաքելեան Համբարձումայ, Առաքելեան Բարսեղի, Աֆրիկեան Խաչատրոյ, Բաղդասարեան Արամի, Բարսեղեան Յակովբայ, Դեվոյեան Պետրոսի, Դոլուխանեան Տիկին Նունէի, Եղեկեան Աւետիքի, Եւանգուլեան Լեոնի, Եսայեան Սարգսի, Լալայեան Երուանդայ, Խալաթեան Կարապետի, Խունունց Մնացականի, Ծուրինեան Գաբրիէլի, Կաֆեան Սարգսի, Մարտիրոսեան Տիկին Հայկանոյշի, Մազմանեան Սարգսի, Մարտիրոսեան Մնացականի, Մելիք-Ադարեան Ալէքսանդրի, Մելիք Բախտամեան Յակովբայ, Մուրադբէգեան Սարգսի, Ջարուխիւնեան Տիկին Մարեմայ, Յարուխիւնեան Սամսոնի, Յարուխիւնեան Տիկին Երանուհւոյ, Ջարուխիւնեան Իսահակայ, Նաւասարդեան բժշկապետի Բագարատայ, Չահնազարեան Յակովբայ, Պօղոսեան Աւետիքի, Սահակեան Ալէքսանդրի, Սաֆարեան Արշակայ, Սէյլանեան Ջարուխիւնի, Տէր-Սահակեան Գարեգնի, Տէր-Յովհաննիսեան Լեոնի, Տէր Յովհաննիսեան Սարգսի, Տէր Ջաբարեան Բարսեղի, Փիրալեան Ջարուխիւնի և Քալանթարեան Անտոնի, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Գոհութեամբ որոյ յայտ առնեմք սիրելեացդ Մերոց և հարազատ զաւակացդ Մերոց հոգևորաց ղեկուցմամբ չնորհակալիս Մեր Հայրական առ Ձեզ, առ ամենեսեանդ, վասն Ջանադիր որդիական ծառայութեանց, որ պատրաստակամ ոգւով յանձն առիք և ի կատար ածիք ամենայն սիրով և խնամարկութեամբ ի ժամանակս հիւրամեծար ընդունելութեան Մերոյ առ Ձեզ ի Տփղիս։ Պատրաստակամ նախատես հոգածութիւն ի ձեռն պատգամաւորաց Յանձնաժողովոյդ, յորս ձեռն հրաւէր առ Մեզ կարդացիք գալ և ապանել առ Ձեզ, ընդունելութիւն փառահեղ ի ժամ ժամանման Մեր ի Տփղիս, խնամատար և լիուսաւ հիւրասիրութիւն, եթէ ըստ առաւութեան, եթէ ըստ ճոխութեան, որ վայելել եաւթ Մեզ, որպէս և հետևորդաց Մերոց, անձնադիր հոգածութիւն պատուական հիւրանոցի անդամոց, որպէս և ճոխական կազմուած ըստ ամենայնի ի ժամ ուղևորութեան Մերոյ ի Տրիխեաց ի Մայր Աթոռս, տան Մեզ իրաւունս և պարտիս Հայրական առաքել առ Ձեզ առ ամենեսինդ զՀայրապետական Մեր չնորհակալիս, որպէս և զօրհնութիւն Մեր ի Մայր Աթոռոյս, որպէս յորմէ չնորհարաշխ զօրութեան։

Շնորհ Տեառն առատասցի ի գլուխ Ձեր ամենեցունց՝ լինել հանապազ զաւակք հարազատք առ Մայրս Մեր Ս. Էջմիածին, զիտակից առ պարտիս որդիական ակնածութեան առ Դահակապետ Նորին, նախանձախնդիր առ փառս անուան և զօրութեան Նորին, զի այն է ընդունելի առաջի Տեառն։ Բազուկ Տեառն զօրացուսցէ զՁեզ կալ և մնալ յարժամ ի նոյն պարտաճանաչ սէր և յարկանիս, զորս ցոյցիք առ Մեզ, որպէս առ Հայր և առ Հայրապետ և գլուխ լրութեան Ազգիս, որոյ բարօրութեան կամ մշտամոնչ աղօթարար առ Ամենարարձրեալն։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ յաւէտ ի Մէնջ, Ամէն։

յ19-ն Օգոստոսի 1916 ամի

Ներքին Տոմարիս ՌՃԿՆ

ի Հայրապետութեան Մերում Ե. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

թ. 1766



ՔԵԹԻ

† Ջեռի, † Սիրեմ, † Ղէչօ.

† 15 մայիսի 1916 Ռէւանդուզի ճակատամարտ

Հայ կամաւորական IV գումարտակի հրամանատար Քեռին մայիսի 13, 14 և 15-ին իր առաջապահ բանակով կատաղի կռիւ էր մղում Ռէւանդուզի ճակատամարտում։ Թիւրքերը մտնում են Քեռու թիկունքը։ Սա՝ բաժանելով իր բանակը երկու մասի և վերցնելով երկու հարիւրեակ իր հետ՝ յաղթական դրոհի է դիմում։ Կատաղի կռւին՝ Թշնամու գնդակը թէև անվնաս հերոսի ճակատն է պսակում յաղթական մահով, այնուամենայնիւ Քեռու ոգին է Թշնամու դիրքը։

Եւրոպական մամուլը մեծ հիացումով է դրատուում քաջաղն հերոսին և տալիս նրա կենսագրականն ու ռազմական տաղանդի նկարագիրը։ Հասարակ մի կօշկակար, ծնուած Էրզրումում 1862 թ., միանում է Կուկունեանի խմբին 1890 թ., 1895 թ. անցնում է Տաճկաստան և Բասէնում նախրւում երկրի ու ժողովրդի պաշտպանութեան։ 1903 թ. անցնում է Սասուն և մասնակցում Անդրանիկի հետ անհաւասար կռւին։ Հայ-Թրքական ընդհարումներին՝ Քեռին Զանգեզուրի, Շարուրի լեռներում ու ձորերում է հղօր պաշտպան հանդիսանում ժողովրդին։ 1908—1909 թ. Քեռին Պարսկաստանում եփրեմի հետ է։ 1914 թ. Քեռին ռուս-տաճկական սահմանի վրայ իր քաջարի բանակով մարտի դաշտումն է կռւում։ Ձմիւնը բերում է Թիֆլիս և մեծ շուքով ամփոփւում Ծօջիվանքի գերեզմանատնը։

«Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներին» տպաստարանում յունիսի 19-ին կատարուեց հանդիսաւոր հոգեհանգիստ։ Երիտասարդ Գէորգ սարկաւագը դրատեց Քեռու հայրենասիրութիւնն ու անվհատութիւնը։

ԲՈՂՈՔ

(Տ. Նազարեանի «Հրատապ Սփիւռքին»)

Ողբա՛ դու երկի՛նք, ցօղի՛ր արտասուք,
Ու ողջ բնութի՛ւն թող մանի սև սգոյ...
Անմեղ զոհերի արիւնը բոսոր
Բողոք է կարդում երկինքին այսօր.
—Ջա՛ա ու չա՛ա դարեր, հազա՛ր տարինե՛ր
Արիւնով ներկուած արամախոհ լեռնե՛ր,
Խորունկ ձորերում թող թունդ որոտայ,
Մեր կրծքից պոռթկած բողոքը թնդայ ..
Ձեր խո՛ր հովիտներն ինչպէ՛ս դամրա՛ն,
Անթի՛ւ դիակնե՛ր իրանց դիրկն առա՛ն.
Բարեշէն գիւղե՛ր գարձա՛ն մոխրակոյա՛,
Ծուխ են արձակում ոլորապտոյտ
Ահեղ խուճապից փախած թշուառնե՛ր
Դալիս են ահա ձեր գթագթո՛ւն ի վե՛ր.
Յետևից նրանց մահն է հալածում,
Իսկ առաջներին՝ անդունդն է բացւում...
Ո՜վ չիրիմների սո՛ւսքօղ աշխարհ,
Ցո՛ւյց տուր ասպատներին վէրքերդ անհամար...
Անթա՛ղ դիակնե՛ր, երէ՛ք տա՛ վայրկեան,
Հնչէ՛ք երկնի տակ ողբը արտմուտքեան։
Դո՛ւ, մահերգ հիւսող քամի՛ չդադարիկ,
Ողբա՛ արտօրէն և սրտաճմլի՛կ.
— Դալիս են դարեր, գալիս ու թռչում,
Մեր սև երկնի տակ նոյն ողբն է հնչում ..
Անցնում են դարեր, հազա՛ր տարինե՛ր,
Մենք ողբ ենք կանչում՝ խոցուած կարեվէ՛ր.
Ու խորունկ վէրքից արիւն է հոսում,
Վա՛ռ ծագկիններին մեր վիշտն է խօսում.
Ու նաչխուն ծագկունք՝ տխրունակ ու հեզ,
Երկինք են նայում՝ սրտներում աղեր.,.
Ո՜վ անսիրտ երկինք՝ սնամբո՛ղ, մնդուէ՛ղ,
Մինչև ե՛րբ նայես մռայլուած ու մութ.
Բա՛ւ է՝ որքան մենք մանկան պէս լայինք,
Քեզ ակնկառոյց աղօթք կարդայինք.
Մեր արցունքներից ու մեր արիւնից
Բողոքն է ծնւել մե՛ծ, ցասումնալի՛ց.
Ու նա՝ ծառացած քո կրծքի հանդէպ՝
Զայրոյթն է դեղում—չանթե՛ր անվրէպ...
Նա կոչ է անում հսկայ լեռներին,
Հրաբուղխ ժայթքել՝ ցասում մոլեղին.
Անհուն ծովերին նա ձայն է տալիս՝
Ուժգին փոթորկուել, յուզուել վրիվրադէզ...
Ո՜վ դաժան երկինք, նայիր դու կրկին
Մեր այս ծխացող աւերակներին.
Անթա՛ղ դիակնե՛ր սեանում, ուռչում,
Պատռած կրծքներից նեղվքն է թռչում...
Հրաբուղխների աշխարհը ահա
Կը ժայթքի շուտով մոխիր ու լաւա ..
Եւ թող կամ պայթի ու խելակորոյս
Երկինք ու երկիր անի հրաստոյգ,
Կամ քո ճակատից վանիր ամպը սև,
Մեզ ողջատուքեան թող ծագի արև...

Ց. Պետրոսեան

ՀԱՅԱՐԴԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

LXII.

Անցեալ տարւայ գարնան մենք առաջարկեցինք հիմնել հայկական կուլտուրական ընկերութիւններից մի շաղկապ Փորում՝ անուանով ժողով հրաւիրեցինք հայ կուլտուրական ընկերութիւնները։ Երկուսի բացատութեամբ եկան ժողովի, որոնք նպատակայարմար համարեցին, նոյնիսկ անհրաժեշտ. և օգտակար այդ միութիւնը։ Սակայն հետևեալ ժողովները այդ ընկերութիւնների ներկայացուցիչներից չը կարողացան, թէ չը կամեցան առաջարկը իրագործել և ցրուեցին ձեռնունայն։

Կրկին վորձեցինք հիմնել նախ Փորում կլուբը, կազմեցինք ծրագիրը և իշխանութեան ներկայացնելուց առաջ հրաւիրեցինք մի քանի ձեռնհասներին միանալ մեր նախաձեռնութեան հետ։ Սակայն այստեղ էլ առարկողներ եղան, որ մենք մեր ձեռքով տասը տասրուց աւելի բարգաւաճ և բեղուն գոյութիւն ունեցող մեր Դրական-Գիդագիտական Միլօնը կամենում ենք նահանգնել և նոր ուրիշը հիմնել։ Հետևանքն այն եղաւ, որ մեր նախաձեռնութիւնից, մտքից օգտուեցին մեր եղբայրակից վրացիները և հիմնեցին իրանց կուլտուրական ընկերութիւնների շաղկապը, իսկ մեր մամուլը այժմս է միայն խօսում նման միութեան մասին։

Մենք երկբայում ենք, որ այժմս էլ այդ միութիւնը հայերը կարողանան կազմել։

Գալով փախստականներին օգնելու գործում համերաշխութեան և աշխատանքի բաժանման, այդ մասին էլ գրել ենք անցեալ 1915 թ. հոկտ. 16-ին № 228 «Մշակում», սակայն ոչոք ականջ չը դրաւ, և իւրաքանչիւրն իր ուղածին պէս անսիստեմ գործելով, թշուառ մեր փախստականներից շատ-շատերին մինչև օրս էլ պահում է յուսահատութեան ճիրաններում։

Ե. Ալա

—XXX—

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԸՑՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Շարունակում է իր գոյութիւնը Հրատապ Սփոփանքը, առանց պետական նպաստի։ Համարեա բոլոր աւազջները գնում են աշխատանքի։ Զառամեալները, յոշոտուածները, մանուկներն են միայն անգործ։ Որքեր 16 հոգի տեղափոխել ենք Շուշու որբանոցը։ Գալիս են շարունակ նորերը՝ մերկ, կիսաքաղց և հիւանդ. առանց բացառութեան՝ ամենքն էլ ընդունւում են Մայր Հայաստանցիների Հրատապ Սփոփանքի տակ, ուր հայ պետականութիւնն ու պարտաճանաչութիւնը հնարաւորութիւն է տալիս մեզ սպասաւորել և խնամելու նրանց։

ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ



† Իշխան Նիկոլայ
Արղութեան Երկայնաբազուկ
30 Մարտի 1916 թ. Թիֆլիս

Փառապանծ հայ իշխանական տոհմի արժանաւոր ներկայացուցիչ, Նորին Կայսերական Մեծութեան սենեկապետ և իսկական պետական խորհրդական իշխան Նիկոլայ Բարսեղեան Արղութեան Երկայնաբազուկ մարտի 30-ին հանդեաւ ի տէր։

Ապրիլի 7-ին արժանավայել շուքով կատարուեց յուղարկաւորութիւնը. Վանքի Մայր Տաճարում կատարուեց պատարագ և այնտեղից մարմինը տեղափոխուեց Սանահին, ուր ամփոփուեց տոհմական դամբարանում։ Հանդուցեալ իշխանը յայտնի էր իբրև ուսումնասէր և ունէր նշանաւոր գրադարան. յատկապէս Կովկասի վերաբերեալ բոլոր հրատարակութիւնները։ Կորեկտ, բարեկիրթ, համբերատար, համեստ իր բնաւորութեամբ իշխան Նիկոլայ Արղութեան Երկայնաբազուկը սիրելի էր մինչև իր ժահն էլ քաղաքիս ազգաբնակչութեան և երկու նահապետական ընտանիքների։

† Քաջարի զօրավար
Իշխան Մ՚ովսէս Զաքարեան
Արղութեան Երկայնաբազուկ

Իշխան Նիկոլայ Արղութեան Երկայնաբազուկը վարել է պատուով Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօն։ Մինչև մահը՝ Թիֆլիսի արական գիմնազիայի պատուաւոր հոգաբարձուն էր և նրա աշակերտութեան հովանին։ Թիֆլիսի քաղաքային խորհուրդը իր նիստում որոշեց մատուցանել հանգուցեալ իշխանի յիշատակին ելախտադիտական առհաւատչեանը և դնել արծաթէ պսակ նրա դագաղին, որ և կատար ածեց։ Կային շատ պըսակներ և զանազան հաստատութիւններից։

Արղութեան տոհմը, սկսած Մեծն Եկատերինէ կայսրուհու օրից, ռուսական պետութեան մատուցել է ուշագրաւ ծառայութիւններ, իսկ հայ ազգին էլ տուել փայլուն գործիչներ, որոնցից Յովսէփ կաթողիկոս Արղութեան Երկայնաբազուկը ծրագրած էր եկատերինէ կայսրուհու իմաստուն կամքով և Հայաստանի ապատութիւնը։

Զօրավար իշխան Մովսէս Արղութեան Երկայնաբազուկի անունը, իբրև քաջամարտիկ հերոսի, անջինջ է ռուսական պատմութեան մէջ։

Հանգուցեալ իշխան Նիկոլայ Արղութեան Երկայնաբազուկի աղջկերանցից մէկը հայազն կոմս Լորիս Մելիքեանի հարսն է, իսկ որդին, իշխան Բորիսը, արդէն ստանձնել է պատուաւոր պաշտօն Ն. Կ. Մ. Կովկասի Օգոստափառ Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի մօտ։



ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՔԻ ԳԱՒԻԹԸ
Իշխան Արղութեանների տոհմական դամբարանը



Տ. Տ. ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՐՊԱԶԹԵՆ ԻՆԹԵՆ ԵՐԿԱՅՆԱՐՈՒԶՈՒԿ

* * * *

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋԱՐԴԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՑ

ՍԿԻԶԲԸ ,,ՏԱՐԱԶ,, № 3

ԹԱԹԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՋԱՐԴԵՐ 947

Երեք հարիւր տարի Սարակինոսները տիրեցին Հայաստանին, որտեղից անընդ դանձ տարին, ուր մշտական բիւրաւոր զօրք ունէին և շարունակ ասպատակում էին, բայց այնքան անկուլտուրական էին, որ երկրից հեռանալիս ոչ մի արաբական գաղութ ու պիւղ չը ձնաց արաբներից։ Այսօր ամբողջ Հայաստանը եթէ պեղեն, արաբական շրջանից ոչ մի կուլտուրական կերտուածք ու կառուցուածք չեն կարող գըտնել։ Հայ գրականութեան և ժողովրդական լեզուի վրայ երեք դարի ընթացքում գրեթէ ազդեցութիւն չը թողեց արաբական լեզուն։ Պարսկական, ասորական և յունական լեզուները քառասուն անգամ աւելի ազդեցութիւն ունին թողած հայ լեզուի վրայ, քան թէ արաբականը։

Սարակինոսները միայն կործանեցին, քանդեցին, եղծեցին հայկական գեղարչէն և հոյակապ կառուցուածքները, բերդերն ու տաճարները, կամուրջներն ու ըրջերը։ Արաբները մտան հարուստ, ճոխ, բազմամարդ և չքնաղ մի երկիր, երեք դարի ընթացքում այնպէս կողոպտեցին, կեղեքեցին, հարստահարեցին, ջարդեցին ու գերեցին, որ երբ նրանք արտաքսուեցան Հայաստանը աղքատ, թշուառ, կործանուած և ամայացած էր, քանըհինգ միլիոն հայից տասը միլիոն էր մնացել։

Արաբների իշխանութիւնը հզօր էր Իւմեան և Աբասեանների առաջի դարում. իսկ վերջին դարում նրանք միայն քարչ էին տալիս իրենց գոյութիւնը։ Վերջին դարում աբբասեան խալիֆներն անուանական էին, երկրի իշխանութիւնն ու հարստութիւնը պարսերի և Թաթարների ձեռքն էր։ Երբ կուլտուրական ֆարսերը իւրացրին իշխանութեան ասպարէզը, սարակինոսները պարտաւորուած էին Արաբիայի լեռները քաշուելու։ Սկզբում խալիֆներն իրենք հրաւիրեցին Թաթարներին, որ նրանց ոյժով ճնշեն, ստրկացնեն հպատակ ազգերը։ Երբ Թաթարները ընտելացան, իրենք սկսեցին անկախ արշաւել։

947 թ. մինչև 1000 թ., չիսուն տարուան անկախ և խաղաղ իշխանութեան ընթացքում, հայերի թիւը ոչ միայն աճեց մինչև 15 միլիոնի, ոչ միայն վերաշինուեցին, վերանորոգուեցին բերդերը, դղեակները, տաճարները, ամրոցները, այլ հայ խիզախ ճարտարապետները այնպիսի սքանչելիքներ կերտեցին, որ անմահացրին իրենց անունն ու գործերը։

I. Սելջուկ-խանը 1000 թ. Թաթարստանից մտաւ Պարսկաստան, ասպատակեց, ջնջեց Կաղնէվիտների և Խարազմների թագաւորութիւնը, նւաճեց երկիրը և իր ընթացքը շարունակեց դէպի արևմուտք։ Սելջուկի որդին Մուխայիլը 1020 թ, Ատրպատականից մտաւ Սալմաստ գաւառը—Դիլման, որտեղից խուժեց այրարատեան նահանգի Նիգ-ի ջնի և Վասպուրականի Աղբակ գաւառները։ Պահլաւունի Վասակ սպարապետը մի գնդով անմիջապէս դիմաւորեց սելջուկներին, ջարդեց ու վանեց Թաթարական հօրդաները, բայց մեծ աւերածի ու աւարի մատնուեց երկիրը։ Աւարն ու կոտորածը այնքան մեծ էր Վասպուրականում, որ Սեբաստիայի ժառանգական իշխանութիւնը և այնտեղ գաղթեց իր ժողովրդի քառորդ մասով՝ 400,000 մարդով՝ կայսեր ծառայելու։ Բիւզանդիոնը տիրեց Հայաստանի սրտին, Վասպուրականի 8 քաղաքներին, 72 բերդերին, 4000 գիւղերին իրենց 115 մինաստաններով, մէկուկէս միլիոն ժողովրդով։

II. Ծննդով հայ Վասիլ կայսրը Վասպուրականին տիրելուց յետոյ, ծրագրեց ամբողջ արևելեան Հայաստանին էլ տիրել։ Եկաւ Արծրում, ափխազներին և վրացիներին հնազանդեցնելու նպատակով, որոնց դէմ վարած կուի ժամանակ մեծ աւերածի ենթարկուեց Կարնոյ դաշտը, Բասէնը, Օլթին, Կիսկիմն ու Համշէնը։ Վասիլի պատգամաւորները կարսի, Նոյնիսկ Անիի թագաւորներից հնազանդութիւն և հպատակութիւն պահանջեցին։ Մինչև դաւադրական թղթեր չը կորզեց՝ Վասիլը չը վերադարձաւ Բիւզանդիոն։ Եւ զարմանալին այն է, որ դաւաճանական թղթի կազմութիւնը կատարեց Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ծրագրով։ Նոյնիսկ հայկական վերջին անկախութեան հետ՝ Անիի բանալիները, ահաւոր կոտորածներով և արիւնահեղութիւններով, Գետադարձը առանց խղճահարելու յանձնեց յոյներին 1048 թ.։

III. Հայաստանը երկար չը մնաց Բիւզանդիոնի իշխանութեան տակ։ Սելջուկ բէգի Թողը՝ Տուղրիլ՝ մտաւ Հայաստան 1049 թ, ջարդեց կայսերական լեգէոնները և վռնդեց Անիից։ Արճէշի բերդերը խլեց յոյներից, քանդեց, ջարդեց ու աւերեց Վասպուրական աշխարհը, կործանեց վանքերը և մաշկել տւեց յոյն Ստեփան իշխանին։ Թաթարները 24 գաւառ կոտորեցին, աւերեցին, կողոպտեցին, մատաղահաս զեղանիներին գերեցին, տարին հարաւ ծախեցին և կարողներին մեծամեծ փրկանքներով միայն ազատեցին։ Բասէնի մէջ և Կարնի դաշտում 14 օր հրով ու սրով ջարդեցին, կողոպտեցին, գերեցին, մատն ձորոխի հովիտը, հիմնովին քար ու քանդ արին Տայքն ու Խաղտիքը։ Տուրուբերան աշխարհի գաւառները, Տարօնը—Մշոյ դաշտի 1848 գիւղերը մոխրակոյտի վերածեցին, սրածեցին և ցրուեցին։ Մանանաղի գաւառն իր Սբմբատաբերդով, Արծն քաղաքը իր ամբողջ հարստութեամբ կողոպտեցին, կործանեցին սելջուկ-Թաթարները։ Միայն Արծն քաղաքում 150,000 մարդ ջարդուեց. միայն Արծնի տաճարներից 800 սայլ եկեղեցական սպաս—ոսկի, արծաթ, մարգարիտ ու գոհար տարին։ 24 գաւառի մէջ կոտորած հայութեան թիւը միլիոնից շատ աւելի է, կողոպուտի գումարը հարիւրաւոր միլիոններ է կազմում, կործանուած վանքերի, տաճարների, բերդերի, դղեակների վնասները կողոպուտից քառասնապատիկ աւելի է։ Տուղրիլի ջարդն ու ջնջումը այնքան սարսափելի էր, որ հայերը մոռացան արար-

նների երիք դարի ընթացքում կատարածները, սելջուկների և թաթարների անգութ և վարվարոս սրաձութիւններից սասանեց ամբողջ հայ աշխարհը։

IV. Հետևեալ տարին (1050 թ.) Մոնոմախոս կայսրը Բարձր Հայքի, Տուրուբերանի, Վասպուրականի և Վրասատանի կուսակալներին լեգէոններով դուրս բերեց սելջուկների դէմ, որոնք անխնայ ջարդուելցան և Լիբարիտ վրացի իշխանը գերի ընկաւ։ Սելջուկները ամբողջ Հայաստանի կանխիկ հարստութիւնը կողոպտեցին, յարձակուեցան Կարսի վրայ, Մննդի գլուխը բերդը գրաւեցին։ Դերեցին ու աւարեցին իրենց դալը ու զարդարանքներով եկեղեցում ապաստանող կոյսերին և հարսներին, տիկիններին և մանուկներին, իրենց թանկագին գոհարներով, մարգարիտներով և ոսկիներով։ Կարսն էլ այնպէս կողոպտուեց և կործանուեց, ինչպէս Անին ու Արծնը, իսկ Սեբաստիա քաշուած Պետրոս Գետադարձ կաթողիկոսը հիւանդից զննում էր, թէ ինչ էր կատարուում իր դաւաճանած և կայսրին ծախել տւած հայրենիքում։

V. 1055 թ. Տուղրիլ սելջուկը նւաճեց ամբողջ Աբասեանց իշխանութիւնը, սպանեց վերջին խալիֆային և աւելի անսանձ կողոպտեց Հայաստանը։ Տուղրիլը Հայաստանում ոտիկան կամ սատրապ չը նշանակեց, նա ամեն տարի ուղարկում էր կողոպտելու, կոտորելու և գերեվարելու։ Ոչ մի քաղաք, աւան թէ գիւղ սելջուկների բարբարոսութիւններից զերծ չը մնաց 1049—1064 թուականներին։ Նոյնիսկ մտան Սեբաստիա 1059 թ., ութն օր կողոպտեցին և գերեցին։ Սեբաստիայի նահանգում աւելի քան 60,000 հայ ընկան և գերուեցան։

VI. Տուղրիլի յաջորդ Ալփ-Ասլանը, 1065 թ. յարձակուեց Գուգարքի և Ապահունքի վրայ։ Կորիկէ՝ Գուգարքի թագաւորը՝ իր աղջիկը տւեց Ալփ-Ասլանին, երկիրը աւերածութիւնից փրկելու համար. Կարսի թագաւոր Գագիկը 100,000 դրամով մի այնպիսի ճոխ սեպան տւեց Ալփ-Ասլանին, որ կարողացաւ փրկել բերդը։ Բայց այնքան մեծ էին վայրենաբարոյ սելջուկների անխղճութիւնները, որ Գագիկն էլ Կարսը ծախեց կայսրին և Ամասիան ստանալով, իբրայիններով քաշուեց գնաց Կապադովկիա։

VII, Ալփ-Ասլանը Կարսից դիմեց Անիի վրայ, ազգաբնակութիւնը անխնայ կոտորից, կոյսերին և հարսներին գերի վարեց, ուղարկեց Սիրիա ծախելու։ Անիի այս կոտորածն այնքան մեծ էր, որ արիւնի հեղեղը քաղաքի միջից մանուկ քշեց տարաւ։ Մի աւազանի մէջ հազար խողխողուած հայի կարմիր ու տաք արեան մէջ մտաւ ու լողացաւ չարահոգի գազան Ալփ-Ասլանը։ Պալատները, ապարանքները, շուկաները և տաճարները կողոպտելուց յետոյ, տաճարների գմբէթներից արծաթի խաչերը վար իջեցրին, ջարդեցին ու տարին։

VIII. 1069—1071 սելջուկները և բիւզանդացիները կռւեցան, երկու կողմի զօրքերից ոտնակոխ եղաւ հայ ժողովուրդը և չարաչար տուժեց։ Ամբողջ Կամուխէնի հայ ազգաբնակութիւնը ջարդուեց ու գերեվարուեց,

IX. Բագրատունի իշխաններին կոտորելուց, Անին, Կարսը, Գոգարքը, Սրծ ը գրաւելուց յետոյ, Հայաստանն այնպէս ամայացրին, որ քառասուն տարուան սելջուկ կառավարիչների օրով ինչ է կատարուել— 1071-1111 թ. ոչինչ տեղեկութիւններ չունինք։ Անընդհատ սելջուկները ընդհարելով վրացիների, ափխազների և աղուանների հետ, կոտորում էին և հայ ժողովրդին թէ Հայաստանում և թէ շրջակայ գաւառներում ապաստանածներին։ Մեծ-Հայաստանում գրիչ վերցնողներին, երկրի վիճակը ողբացողներին ժողովրդի հետ ջնջելուց յետոյ, դիմում են Կիլիկիայի բարձունքը ապաստանած հայկական գաղութի վրայ։ Սելջուկները 1107 թ. Թորոս իշխանի դէմ կատարած արշաւանքից օգուտ չունեցան, բայց անչափ վնաս հասցրին հայերին։

X. Մահմուտ սելջուկ զօրավարը 1112 թ. արշաւեց Միջագետքի Ուրհա քաղաքի վրայ, ընդհարուեց Վասիլ իշխանի և հայ ժողովրդի հետ, մի ամբողջ տարի մեծամեծ վնասներ հասցրեց ոչ միայն քաղաքում ապրողներին, այլև ամբողջ շրջակայ երկրագործ ժողովրդին։ Այս արշաւանքի շրջանում մտան Ծովք դղեակը և սպանեցին Ապիրատ իշխանին։

XI. Իկոնիայի սելջուկ տոհմի իշխանները 1135 թ. մտան Կիլիկիա, աւեր-աւարի մատնեցին, մեծ ասրիւնահեղութիւն կատարեցին և 30,000 հայ երկնեռ մանուկներ գերեցին։

Մեծ-Հայաստանի հիւսիսային մասին վրացիներն էին տիրել, հարաւ-արևելեան մասը Պարսկաստանը տիրող սելջուկները, իսկ արևմտեան մասը Բիւզանդիոնի իշխանութեան տակն էր գտնւում ամբողջ XII-րդ դարում։ Թէև Հայաստանի ձորերը, սարալանջերն ու բարձրաւանդակները «Մէլիք» անուն տակ ունէին իրենց տոհմիկ իշխանիկները, որոնք հաւատում էին իրենց շուրջը հայ ազգաբնակութիւնը և հովանաւորում, բայց այդ «Մէլիքներից» շատերը գտնւում էին օտար բէյերի անմիջական իշխանութեան տակ, շատերն էլ, գոնէ առերես, տիրող իշխանութեան կրօնին էին յառած։ Կապուտ-կողոպուտն անպակաս էր, կրօնական հալածանքն անսահման, բայց ժողովուրդն ուրախ էր, որ, գոնէ առժամանակ, կոտորածն ու գերեվարութիւնը դադարել էր։

Այս շրջանում հայկական գաղթը, որն սկսած էր XI-րդ դարում, հասաւ իր գագաթնակէտին։ Հայերը իջան Պոնտոս, անցան Սև ծովը և տարածուեցան Աբրիմից մինչև Լհասատան. Տրանսիլւանիա և Ռումանիա։ Անիշխանութիւնն ու սելջուկ թաթարների անգութ կողոպուտն այնպէս էր դառնացրել, որ փախչում էին հայրենիքից էլ առանց ետևն աչելու։

Բայց և այնպէս 1120 թ. մինչև 1220 թ. վերջ գտած ասպատակութիւնները, կոտորածներն ու գերեվարութիւնները ազատ շունչ քաշել տւին երկրում մնացած հայերին, որոնք օտար իշխանների անմիջական իրաւանց տակ նորից ծաղկեցրին երկիրը, վերակենդանացրին գիւղատնտեսութիւնը, այգեգործութիւնը, առևտուրն ու արհեստները և կուլտուրայով ստիպեցին իրենց բռնակալ իշխանաւորներին իրենց հովանաւորելու, որպէսզի սուված, տկլոր չը մնան և վրաններից դուրս գալով ապարանքներում ապրեն։ Բայց երկարատև խաղաղութիւնը Հայաստանի և հայերի համար չէր սահմանուած։

(Կը շարունակուի)

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ



† Բժ. Խաչատուր Բահաթրեան
28 Օգոստոսի 1916 Թ. Շուշի

Ծնուել է հսկայ Ղարաբաղի Շուշի քաղաքում 1856 թ., ուր ընկերական ուսումն առնելուց ուղարկուում է Մոսկւայի Լազարեան ճեմարանը։ Այստեղ 1875 թ. ոսկէ մէդալով միջնակարգ ուսումն աւարտելով, մտնում է Մոսկւայի համալսարանի բժշկական ֆակուլտէտը, 1881 թ. ուսումն աւարտած՝ բժիշկ մնում է համալսարանի կլինիկայում։ Օժտուած գիտութիւնով, իբրև մասնագէտ ներքին հիւանդութիւնների, վերադառնում է հայրենիք և առանձնում գաւառական և քաղաք. բժիշկների պաշտօններ Զանգազուրում, Շուշում, Բագուում։

Վերջին տասը տարին բժ. հայ-քրքական անմիտ ընդհարումներին՝ վերադառնում է ծննդավայրը՝ Շուշի՝ և մատուցանում ծառայութիւն ժողովրդին՝ հային և քրքին, որոնց անհուն սէրն ու յարգանքը մինչև մահն էլ լուռլի վայելել է։ Մարդասէր և հեղ իր բնաւորութեամբ, սիրելանք է եղել կարօտեալ հիւանդին, վարել է Շուշու քաղաքագլխի պաշտօն։ Ազգային կալւածքների էպօխին, Պլևի օրով աքսորւում է Օրէնբուրգ, ուր մնում է մինչև 1906 թ. ապա Դանձակի նահանգի ազգաբնակութեան կողմից ընտրւում է I Պետական Դումայի անդամ և մասնակցելով Վիբորգեան կոչին, դատապարտւում է երեք ամսեայ բանտարկութեան։ Հայրենի աւեր երկիրը վերաշինելու նպատակով՝ հայաշատ քաղաքներում հանգանակում է մօտ 200,000 ր. Շուշի—Դանձակեան խճուղու համար, Թիֆլիսում նախագահում է, Տարազի խմբագրատունը, Ղարաբաղցիների այն ժողովին, որ Տ. Նազարեանի նախաձեռնութեամբ կազմել էր Շուշում քաղաքային վարչի ընկ. հիմնելու։ Այդ առաջարկը, որ մեծ հաւանութիւն էր գտել ու կազմակերպիչ մարմին ընտրւել էին պ. պ. Մարկոս Դօլուխանեան, Խաչատուր Խաչատրեան, Պօղոս Ղամբարեան և Տիգրան Նազարեան, սակայն չիրականացաւ, արտաքին խոչընդոտների պատճառով։

† Վահրամ-բէյ Տատեան

Բահաթրեան հիւանդ, մահճին թէև պիրի, սակայն մասնակցում էր և հետևում ազգ. հասարակ. կեանքին։ Թաղումը կատարել է մեծ շուքով։ Դաւիթ խան Աւան Իւզբաշեան, որի աներձազն է բժ. Բահաթրեանը, սրա յիշատակին Շուշում կառուցանում է երեխաների հիւանդանոց։ Մարմինն ամփոփւել է տոհմական դամբարանում, Շուշու կուսանաց վանքում, որի եկեղեցին Բահաթրեան տոհմն է կառուցել։

Հանգուցեալի այրուն ուղարկեցինք ցաւակցական հեռագիր։

ԳՈՒՐԳԷՆ-ԽԱՆ

Սիւնեաց քաջարի աշխարհի Դաւիթ բէկի զինակից Շահկերտցի Յովհաննէս իշխանի արժանաւոր զարմն է Գուրգէն խան Դ. Աւան Իւզբաշեան որ ծաղիկ հասակում, հերոսական յաղթական մահով իջագետքում պսակւեց մայիսի 15 ին, մարտի պատասուր դաշտում և մարմինը բերելով Թիֆլիս, յունիսի 5-ին պատշաճ շուքով, եկեղեցական և զինուորական հանդիսով հոգին յանձնուեց։ Բինիկ վ. իր պերճ հետևակ զամբանականով ցնցեց հոծ բազմութեան, ծանօթացնելով աղօթողներին այն տոհմի հետ, որի շառաւիղն է նա։

† Գուրգէն խան Դաւթեան Աւան-Իւզբաշեան

«Տասնութերորդ դարուն, պատմ. Հ. Բենիկ վարդապետը մի գաւառն պարսիկ, Հէյդար խան, իր արիւնռուշտ զօրքով սրարշաւ գալիս էր Ղարաբաղի բարձունքը մը Թառաճ Շահկերտ աւանը կործանելու, հայ ժողովրդի անպարտ արիւնը վօխելու։ Այդ ժամանակ աւանի տէրը մի հայրենասէր քաջ, դպեակ Իպարխոպները լայնացրից, պաշտպանութեան տակ առաւ, 500 հայ կտրիճ ջոկից, զինուորական վարժութիւններով պատրաստեց և Հէյդար խանի յոյսերն ի դերև հանելով, ջարդեց

† Եկատերինէ Սարաջեան

ու փախցրից Թշնամուն։

Այդ քո մեծ պապն էր, Աւան Իւզբաշին, որ այսօր Շահկերտի պարիսպներից ժպտում է քեզ, որ իր հերոսական ոգին պահպիր ու կանչում է քեզ. «Ի՛մ Գուրգէն, դու կաս»։

Հնաւանդ հայի ազատասիրական ոգին պահելդ ու տևական եղաւ ցայսօր Ղարաբաղում, ուր մեր քաղաքական կեանքն առկայծելով մնաց մինչև յետին ժամանակները։ Ղարաբաղը հերոսների աշխարհ է և այսօր իսկ Ղարաբաղի շատ քաջերով ենք պարծենում։

Այդ հերոսների սիրուն երամը քո հայրենիքի սեգ լեռներից այսօր ծաղիկներ են բերում քեզ նւէր ու կանչում. «քաջ Գուրգէն, դու կաս»։

Քո անարի քով կանգնած են գլխիկոր քո վինակից ընկերները, ոսկ քաջարի զօրքի սպաները, որոնք բերել են մեզ քո առիւծական մռունչի արձագանքները, որով որոտացին Տիգրիսի ափունք ու զարդանդ փոեցին Թշնամու վրայ, երբ դու կռւում էիր արիաբար։

Այդ ընկերները, այդ արձագանքները, որ սրտէ ի սիրտ են անցնում, որոտում են ու կանչում. «Հեյ լեռ Գուրգէն, դու կաս»։

Կար ժամանակ, պարսից ապերախտ թագաւորն ասում էր. «Իմ զօրքերի մէջ ամենայնիւին վինուղն ասորին է, բայց ասորուց վատարին էլ հայն է»։

Հայ հերոսների և քո քաջագործ մանուկը բարձած է այդ անիրաւ նախատինքը մեր վրայից։ Այժմ հզօրագոյնները էլ գովքն ի բերան կանչում են. «Հայ Գուրգէն, դու կաս»։

Եւ ինչ անմիտ խօսք է, որ ասում են թէ՝ հերոսը միայն ե՞րբ են միանում հերոսները։

Միանում ու մոռացութեան պիրկն են անցնում սովորական, եսական անձերը. իսկ հերոսները, որոնք իրենց հայրենիքի համար են միանում, վերածնւում են այն օրը, երբ գերիզման են իջնում։

Շատ են ապրում, երկար, երկար, նրանք, որոնք հայրենիքի համար են միանում։ Եւ հայ հերոսների գովքը պատմող հայ բանաստեղծը կանչում է քեզ. «Գուրգէն, հայրենիքիդ համար մեռար, դու շատ ապրեցար»։

ԱՐՏԱՇԵՍ ՍՈՒՃԵԱՆ

Ծնւել է 1881 թ. Ախալցխայում, 12—13 տարեկան հասակից կօշկակարի աշակերտ և այդ ժամանակից իսկ տարւած Հայաստանով... 17—18 տար. անցնում է Արտաքուժանով Վարս, Հայաստան գնալու հաժար, բայց ընկերները թոյլ չեն տալիս, տանում են Էջմիածին։ Տարիներ յետոյ անցնում է Սասուն, զինակցում Անդրանիկին։ Նարեկայ վանքում՝ հալածական թիւրքերից, ընկնում է պարիսպներից ցած, կոտրում թևերը, ապաքինւում, վերադառնում կովկաս իր արհեստին, կօշկակարութիւն անում։ Աւելի ուշ՝ Ար-

† Արտաշէս Սուճեան
30 Մարտի 1916 թ, Բիթլիս

տաշէսը երևում է Բոլգարիայում, մտնում է Ս Փիայի զինւորական դպրոցը, վերադառնում է Օղնասյով Ռուսաստան և իրրև յեղափոխական՝ աքսորւում Սիբիր։ Այստեղից անցնում է Պարսկաստան և երեք տարի մնում այնտեղ Ալպեանի մօտ և վերջը տեղափոխւում իր ծննդավայրը։ Այստեղից, ուսւս տաճկական այս պատերազմին, իրրև Անդրանիկի վաշտապետ, մասնակցում է 32 կռւի, վիրաւորւում, բժշկւում և նորից նետւում ռազմի բեմը, մինչև մարտի 29-ին Բիթլիսի, մօտ բաց ճակատ կռւի բռնւելով, ծանր վէրքեր ստանալով, վախճանւում է հետևեալ օրը։ Մարմինը զինւորների ձեռքով տեղափոխւում է Թիֆլիս և ապրիլի 17-ին շուքով Խօջիվանքի գերեզմանատանը ամփոփւում։

ԹԵՐԹԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԱՆՑՔԵՐ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԴՈՐԹԻԶՆԵՐ ՈՒ ԴԷՄՔԵՐ

ՆԻՆԱ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

I.

ԱՌԱՋԻՆ ՅԱՆԴԻՊՈՒԹԻՒՆԸ

Յունիս ամսի կէսն էր 1871 թուականի... Վաղ առաւօտ, արեւը նոր էր ծագել, երբ ես կրծանիսում բաղխում էի Գ. Սունդուկեանի այգու մեծ դուռը...

—Ո՞վ է, կանչեց Սունդուկեանը, որ պատրաստւում էր սառը վաննա ընդունել...

—Ես եմ, Տէր-Գրիգորեանը, վանօն, Պէպօի յուշարարը, եկել եմ, որ այսօր սկսենք պիեսա գրել, դուք կը հեղինակէք և կը թելադրէք, իսկ ես կը գրեմ.,.

—Վահ, լեղակխանա՜ է... Ջմշկեանը ձեզ ուղարկեց...

Ես տեսայ՝ Այդ ժամանակ Գաբրիէլը և Գէորգը կուռած էին և վերջինը ինձ պատւիրել էր չասել Սունդուկեանին, որ իր առաջարկութեամբ եմ ես գնում Սունդուկեանի մօտ...

—Ոչ, ես ինքս եկայ, ես ուզում եմ, որ դուք մի նոր պիէս գրէք...

—Վահ, դու կարծում ես, որ իմ գլուխը դհոլ է, որ վայտովդ խփես և ձայնէը հանել տաս... համեցէք, համեցէք,այ տղայ,կանչեց նա այգեպանին, դուռը բաց... Նինաս, Նինաս, շուտով հագնւիր և գնա մեր երիտասարդ հիւրի մօտ, զբաղեցրու նրան մինչև ես հագնւեմ...

Բայց Նինան արդէն հագնւած էր և մի քանի վայրկեանից ինձ մօտ վազեց սպիտակ կարճ շոր հագած, սևաչեայ մի վեց տարեկան երեխայ, որ աւելի շուտ հրեշտակի էր նմանւում քան թէ օրիորդի... Նա ինձ մեկնեց իր փոքրիկ ձեռքը և արագ արտասանեց.

—Բարև, բարև, շուտ ուրախ եմ քեզ հետ ծանօթանալով։ Թէպէտ ես քեզ ճանաչում եմ... յիշո՞ւմ ես Պէպօի փորձերը մեր տանը... ես քեզ համար միշտ թէյ էի բերում, դու պաքսիմատներ չէիր սիրում, այլ լիմոնով թէյ... այժմ էլ այդպէ՞ս է... Ի՞նչպէս է քո անունը...

—Վանօ։

—Վանօ. լաւ անուն է, ես հաւանում եմ... Այ մեզ մօտ գալիս է Սիմօնեանը, մայրիկիս նախկին ուսուցիչը, նրա՞ անունը Պետրոս է... լաւ անուն չէ... ինչ է՝ Պետրոս...

—Իսկ ձեր անունը ինչպէս է...

—Հա, հա, հա, «ձեր անունը»,կարծես ես մի մեծ օրիորդ եմ, ա սա քո անունը... իմ անունը Նինա է... հաւանո՞ւմ ես...

— Շատ եմ հաւանում։

— Իսկ իմ անունը կատիւշա է...

—Իսկ իմ անունը Գիդօ է։

—Մի խանգարէք, ես զբաղեցնում եմ հայրիկի հիւրին, իսկ դուք խառնւում էք մեր խօսակցութեան մէջ... Երբ մեծերը խօսում են, փոքրերը պէտք է չը խանգարեն, նկատեց նա իր փոքր քրոջն ու եղբօրը։ Վանօ, գնանք այգին։ Ես քեզ կը ծանօթացնեմ Հասասի հետ .. նա քեզ չի կծի, նա շատ չար, բայց խելօք շուն է։ Կատիւշա, վազիր մի պակսիմատ բեր։ Դու պակսիմատներ չես սիրում, իսկ Հասասը սիրում է... դու նրան պակսիմատ կը տաս և նա քեզ հետ կը բարեկամանայ...

Նա ժամեցաւ հաստ շղթայով կապած ահագին շանը, անցրեց մատիկները նրա խիտ և բարձր մազերի մէջ...

—Հասաս, սրա անունը Վանօ է։ Ինչ ես մըրմըրում, նա մերն է, տես նա քեզ համար պակսիմատ է բերել, մենք միասին կը խաղանք, ես քեզ կարձակեմ..

—Նինա, Նինա, մի արձակիր, կանչեցի ես վախեցած, հետից մեկնելով պակսիմատը։

—Կարծում ես հիմա կարձակեմ, յիւայ, երբ դուք կը բարեկամանաք... տեսնո՞ւմ էք, նա արդէն ձեզ նայելով պոչը շարժում է .. Հասաս, որ արձակեմ քեզ, չե՞ս կծի Վանօին...

—Ոչ, ոչ, մի արձակի, Նինաս, մի արձակի...

—Ի՞նչ վախկոտն ես, ամօթ չէ՞, տղամարդ ես, ասաց նա և արձակեց շունը...

Ես տեղն ու տեղը նստեցի գետնին և նորից մեկնեցի պակսիմատը շանը...

—Երեխան՝ շան վզնոցը բռնած՝ ժամեցաւ ինձ... ես սարսափած նստած էի, պակսիմատը մեկնած ձեռքիս։ Հասասը լիզեց երեսս, մըռմըռաց, առաւ պակսիմատը և հեռացաւ. ես բոլորովին սպրդնած և շլացած էի։

Այդ օրը Գ. Սունդուկեանը սկսեց ինձ թելադրել իր «Քանդած օճախը», որը նա ինձ նւիրեց և պատւեց ու մեծարեց ուղերձի հետևեալ խօսքերով. «Որ կարողանաս միշտ բերես քեզ սիրող ու պատւող բարեկամ Գաբրիէլ Սունդուկեանցին»։

II.

ԹԻՒԲԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՍԸ

1874 թուականի օգոստոսի վերջն էր մօտենում։ Գրիգոր Արծրունու առաջարկութեամբ ես պայմանաւորւեցի վերին Ազուլիսի երկսեռ ուսումնարանի հոգաբարձու Միլքոն Աթաբէգեանի և Սարգիս Հախնազարեանի հետ և օգոստոսի վերջին պէտք է մեկնէի Վերին Ազուլիս, ուսւսերէնի ու թուաբանութեան ուսուցչի պաշտօնով։ Սունդուկեանը բնակւում էր Գ. Ծուրինեանի տանը։ Ես Նինային թուաբանութեան դասեր էի տալիս։ Նա պատրաստւում էր մտնել Գայհանեանց ուսումնարանը։

Երկուսով՝ Նինան և ես՝ նստած էինք Գաբրիէլի գրասենեակում և պէտք է պարապէինք թուաբանութեան դասով, բայց թուաբանութիւնը մեր գլուխը չէր

† Նունէ Գաբրիէլեան Սունդուկեան

դալիս . խօսակցութիւնը իմ ճանապարհորդելու շուրջն էր։

—Դու բաղդատօր ես, որ ուսուցիչ ես լինելու, երբեմն ես ես կուզենայի վարժուհի լինել։ Ինչ ցանկալի բան է վարժուհի լինել, սովորեցնել երեխաներին։ Վանօ, երևի երբէք չես պատմի քո աշակերտներին։ Նրանց պէտք է սիրել, փաղաքշել։ Պէտք է այնպէս անել, որ նրանք սիրեն քեզ, այ օրինակ ինչպէս ես քեզ սիրում եմ ու յարգում...

—Ես կաշխատեմ, որ իմ աշակերտները ինձ սիրեն...

—Այո, այո, անպատճառ։ Նամակներ շուտ շուտ գրիր...

—Կը գրեմ։ Առաջին նամակը հայրիկիդ կը գրեմ, իսկ յետոյ քեզ...

—Անպատճառ, անպատճառ, եթէ ոչ հայրիկը կարող է նեղանալ։ Առաջ նրան գրիր յետոյ ինձ, ես էլ քեզ կը պատասխանեմ...

Այսպէս էր խօսում 10 տարեկան երեխան, որի բարեկամը լինելու պատիւը արդէն երեք չորս տարի վայելում էի։

Գրասենեակը մըտաւ Գաբրիէլը, ձեռքին մի արծաթէ չքեզ ժամացոյց։

—Վանօ ջան, ընծայում եմ քեզ այս ժամացոյցը, իբրև յիշատակ Նինայից։ Դու այժմ ուսուցիչ ես և քեզ ժամացոյց է հարկաւոր։ Հաւատացրիմ հոգիս պաշտօնիդ, բայց թատրոնը մի մոռանար, աշխատիր այնտեղ ներկայացումներ կազմակերպել տօներին, այնպէս որ պաշտօնիդ չը խանգարէ։ Մեծ պարտականութիւն ես յանձն առել, հաւատացած եմ, որ դու կարդարացնես իմ յոյսերը։

Երեքս էլ արտասուեցինք և գլխախառնուեցինք։



† Գաբրիէլ Սունդուկեան
Պէտօն ստեղծագործած տարին

Ա.

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

«Վանօ ջան, հայրիկը ստացաւ քո նամակը և չէ ուզում քեզ պատասխանել։ Ջը գիտեմ դու նրան ինչ ես գրել, բայց նա.ասում է, որ նամակդ շատ թեթևսոլիկ է։ Նա ասում է, որ դու ամենևին չես հետաքրքրում քո շրջապատը և նամակդ լցրել ես տափակ հանաքներով։ Աշխատիր հայրիկին այնպիսի նամակ գրել, որ նա գոհ լինի քեզանից։ Ես սրդէն սովորում եմ Գայիանեան ուսումնարանում և անհամբեր սպասում եմ քո նամակիդ։ Ինչպիսի աշակերտներ ունես, լա՞ւ են հագնւած, միամի՞տ։ Բոլորը գրիր։ Ննինա»

«Վանօ ջան, ստացայ քո երկրորդ նամակը, որ ինձ մեծ հաճոյք պատճառեց։ Առաջին նամակիդ գոհ չէի, կարծես նոր տեղ գնալով, դու այնտեղ ոչինչ չէիր տեսել։ Գրում ես, որ օրիորդաց ուսումնարանի դահլիճում բեմ ես շինում, որ վարագոյրը ոգի Համլետի է ներկայացնում։ Մինչև անգամ քո շինած բեմը պրակներ ունի։ Հարցնում ես, թէ արդեօք իրաւունք կը տամ «Օսկան Պետրովիչը երազում» պիեսայի մէջ մի քանի փոփոխութիւններ անել։ Ոչ թէ իրաւունք կը տամ, այլ և հարկաւոր է, որ դժոխքից խօսող անձնաւորութիւնները տեղականին յարմարեցրած լինեն։ Աւելի հետաքրքիր կը լինի։ Միայն չսղբրած լինեն։ Ես փաղանցութիւններ չեմ նեւ։ Մի մոռանար, որ ամենից առաջ դու ուսուցիչ ես։ Ամենքը քեզ բարեում են։ Իսկ Սօֆին զգուշացնում է մրսելուց։ Քո ԳԱԲՐԻԷԼ»։

IV.

ԴԱՐՁԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄՕՏ

Երջանիկ ամիսներ և երջանիկ տարիներ ես անց կացրի բաղդատօրեան ու գըզուած այդ երեք անձնաւորութիւնների ինձ մեծ պատիւ բերող բարեկամութեամբ... Ինձ համար Գաբրիէլից, տ. Սօֆիայից և Ննայից դուրս ոչինչ չկար, առանց նրանց իմ օրը օր չէր... և ահա հասան եկան անընդհատ օրեր, երկար գիշերներ, երբ հաւաքւում էին Գաբրիէլի տանը այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք Թիֆլիսի մտաւորականի հետ որևէ կապ ունէին։ Այդտեղ սկսւում էին անընդհատ վիճաբանութիւններ, մաքերի փոխարինումներ բոլորի մասին, ինչ վերաբերում էր մտաւորականին, օբւոյ հարցերին։ Այդտեղ կը տեսնէիք Գրիգոր և Անդրէաս Արծրունուն, Րաֆֆիին և Արփիար Արփիարեանին, Ն. Ե. Նիկօլաձէին, Իլիա Ճավճավաձէին, Ակակի Ծերեթելլին, անհետք կորած Վահօ Մաչարելուն, Ելենա և Կոդէ Կիալիանինեերին, Բագրատ Նաւասարդեանին, Գէորգ Եւանգուլեանին, Աբգար Յովհաննիսեանին, Գէորգ Ջմշկեանին և ուրիշ շատերին, և դրանց մէջ, ինչպէս մի ոչ հրկրային արարած, անհանգիստ և արագ պտտում էր Ննինան. նա ամէն բէյ էր տալիս, միւսին ծխախոտ, երրորդին ընծայում էր մի անմեղ ժպիտ, չորրորդի համար ունէր պատրաստ նախատաւսութիւն և Գաբրիէլի բաղդատօր հայեացքը հետեւում էր իր դստեր շարժումներին, նրա խօսակցութիւններին։ Դեռ այդ ժամանակից՝ Ննինան ընտանիքի մէջ այնպիսի դիրք բռնեց, որ նրա կարծիքները և կամքը ամենքը ի նկատի էին առնում։ Յետագայում ամենքան դա էր կարգադրո՛ղ և ամենքը գըլ-

Գրիգոր Արծրունի
Դորձունէութեան սկզնակին

† Սուրէն Սպանդարեան

նում էին, որ այդպէս էլ պէտք է լինի։ Ամբողջ ընտանիքը, բաղկացած հայրից և մայրից, երեք քոյրերից և երեք եղբայրներից, խոնարհւում էր նրա հեղինակութեան առաջ...

—Վա՜ծ ջան, ամեն բան նինան է անում, ինչ կը լինէր մեր դրութիւնը առանց նրա՝ եւ ինչ հիանալի վարժուհի է նա, աւելացնում էր հանգուցեալ դրաժատուրդը հպարտութեամբ...

Այդպէս անցան բաղդաւոր ամիսներ, անցան տարիներ և ես մեռայ... Հետաքրքիր չէ թէ ով ինձ սպանեց, միայն թէ ես մեռայ հայ արուեստների համար, թատրոնի համար, դրականութեան համար և յանկարծ ես զգում եմ, որ յարութիւն եմ առել և Գաբ իէլի դրկում ես լսում եմ նրա սրտի բաբախումը, ես դարձեալ գտնւում եմ թանկագին ընտանիքի մէջ, որ ամեն մի իմ ցաւին և վշտին անհուն հոգատարութեամբ և համակրանքով է վերաբերւում, ես դարձեալ առաջւան պէս սեղմում եմ Նինայի փոքրիկ և քնքոյշ ձեռքը, ես համբուրում եմ տ. Սօֆիայի միայն բարիք գործելու համար ստեղծած ձեռքը, ես դարձեալ նստած եմ ճաշի սեղանի մօտ Գաբրիէլի դիմացը, տ. Սօֆիայի և Նինայի մէջտեղ։ Ես դարձեալ լսում եմ Յովհաննէս Սպենդիարեանի ձայնը, որ անդադար կրկնում է. «Ախ վա՜ծ, վա՜ծ», և այդ բառերով նա հասկացնում է, որ ինքը ամեն բան գիտէ, որ Գաբրիէլը նրան ամեն բան պատմել է... Այդտեղ դարձեալ տեսնում եմ միշտ կանգուն և գործելու պատրաստ բժշկապետ Նաւասարդեանին. նա դարձ ալ ուշադրութեամբ լսում է և խորհրդաւոր կերպով գլուխը շարժում...

—Ա՜խ, բժիշկ, բժիշկ, ախ, Բագրատ, Բագրատ «Ներանից դէսը կարմիջի տակով չաս ջուր անցկացաւ»...(*)

Ես նստած եմ հիւանդի մահճակալի մօտ... Ես պատմում եմ, անվերջ պատմում եմ ու յանկարծ յիշում եմ, որ ես հիւանդի մօտ եմ... ես ընդհատում եմ պատմութիւնը, ներողութիւն եմ խնդրում...

—Ոչ, ոչ, շարունակեցէք, վա՜ղ, շարունակեցէք, ես չեմ յոգնում, այլ ընդհակառակը հաճոյանում եմ ձեր դուք խօսում էք...

Ու մխիթարանքի և քաջալերող խօսքերը աղբիւրի զովացուցիչ ջրի նման թափւում են նրա դուռնատ, նեղ շրթունքներից, զայրոյթն է լսում նրա ձայնի ելևէջների մէջ, զայրոյթ դէպի ինձ վշտացնողները և համակրանք դէպի իմ անձնաւորութիւնը... Ես հիանում եմ թեթեւացած, մխիթարւած, նոր ոյժեր ստացած աժեն տեսակ հարուածներ տանելու և նրանց ընդդիմադրելու համար...

Փոխանակ հիւանդին օգտակար լինելու, ես եմ օգտւում նրա անսահման բարութիւնից և մարդասիրութիւնից... Նա զգում է, որ ինձ հարկաւոր է մխիթարել, օգնութեան ձեռք մեկնել և նա այդ անում է առանց ուշադրութիւն դարձնելու իր վտանգաւոր դրութեան վրայ... Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի...

Ց. Տէր-Գրիգորեան (Վանս)

ՄԻՔԱՅԷԼ ՍԱԼԱՄԲԷԿԵԱՆ

† 3 Յունիսի 1916 թ. Թիֆլիս

Վաճառականական մեծ անունների կենսաբար հովերով ըննւած, մինչև խորին ծերութիւնն էլ ճաշտարապետ Միքայէլ Սալամբէկեան մնաց իր ցայտուն ու տոկուն բնաւորութեամբ տիպիկ, համդուգած, մոլեռանդ-դաղափարական։ Պետրոս Սիմէոնեանի, Պալասանեանի, Զաքարեայ Գրիգորեանի գործակից և սրանց նման բուռն ոգևորութեամբ՝ իբրև հիմնադիր Թիֆլիսում դպրոցների և ուսուցիչ՝ տասնեակ տարիներ վարել է ազգային-հասարակական պաշտօններ։ Աւելի քան քսան տարի Ներսիսեան դպրանոցում նկարչութեան, գծագրութեան ուսուցիչ է եղել։ Թիֆլիսի Մօջաւանքի գերեզմանատունը ծառուղիներով զարդարել է, պարըսպել և այլն։ Մ. Սալամբէկեան վախճանւեց 75 տարեկան հասակում, կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Սրա մահով անհետանում է Մեղւական կուսակցութեան վերջին տիպիկ ներկայացուցիչը։

Միքայէլ Սալամբէկեան
† 3 յունիսի 1916 թ. Թիֆլիս



ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ
(1879—1881)

(Սկիզբը Տարազ 1913 թ. № 11).

Կ. ՊՕԼՍՈՒՄ

Վերջապէս հաւաքուեցինք Ղալաթիա աստած թաղը, նօտար Սրապիոն Հէքիմեանի գրասենեակը, ուր և ձեւակերպուեց յետոյ մեր պայմանները, վերցրինք ապմէն մէկս պայմանագրութեան մի մի օրինակ և խոյն գնացինք լուսանկար Ապտուլլահ եղբայրների մօտ, մեր պատկերները հանել տալնք և դերասանուհիներին և Ադամեանի լուսանկարները իսկոյն ուղարկեցի մասնաժողովի նախագահ իշխան Ամատունուն. այն տեղից մենք գառանք մեր հիւրանոցը, ուր Քուջարեանցը պատուիրեց ֆրանսիական մի լաւ նախաճաշ իր հաշուով։

Երիտասարդական օրերը՝ցս իսկ յափշտակուած լինելով Հէքիմեանի գրուածքներով, ես շատ փափաքում էի նրա տեսութեանը և շատ ուրախացայ, որ ինձ յաջողուեց ոչ թէ միայն տեսնել նրան, այլ և մի տեսակ բարեկամական յարաբերութիւն ունենալ նրա հետ, Պոլիս եղած ժամանակս։

Մի բան ինձ միայն շատ խորթ թւաց. այն մարդը, որ իր գրուածքներում այնքան հայրենասէր և կրակոտ ազգասէր է հանդիսանում, իր տան մէջ, իր ընտանիքում, անգամ իր գրասենեակում օտար լեզուներ էր գործածում. ընտանիքում յունարէն, իսկ գրասենեակում և ծանօթների մօտ տաճկերէն։

Այլ է գաղափարի տէր լինել, այլ է գաղափարի գործադրերն իմանալ։

Հէքիմեանի հետ ծանօթանալուց յետոյ, մենք ծանօթացանք և մի ուրիշ յուսաւոր անձնաւորութեան հետ, նախկին Մանզումէի Լիքթեար տաճկաբարբառ լրագրի խմբագիր Փանոսեանի հետ, որն ունէր թէև տարօրինակ կարծիք հայութեան առաջդիմութեան մասին, սակայն պարզ և ազնիւ բնաւորութեան տէր մարդ էր։ Սա ես մէկ անգամ ակնարկից ինձ Ադամեանի խարդախութեան մասին, բայց ես պարձնալ չհաւատացի։

Այդ պարոնի առաջարկութեամբ. մենք այցելեցինք սուրբ Փրկչի աղբատանոցը, որը մի նշանաւոր հիմնարկութիւն է, բայց ափսոս որ կարղապատ՝ութիւնը բոլորովին ասիական է։

Այդ տեղ ես մեզ զարմացրից պոլսեցոց ունեցած թերի տեղեկութիւնները ոտնատակ նշանաւոր պէս ասլական դործիչների մասին։

Աղբատանոցի ընդունարանում մենք տեսանք պատին վրա կախ արած վրաց իշխան գեներալ Մելիքովի պատկերը, որի տակ խոշոր տառերով գրուած էր «Հայազգի ռուսաց զօրավար Լօռու-Մելիքեան»։

Քուջարեանցը և ես, ուշադրութիւն դարձնելով այդ հանգամանքի վրայ, չկարողացանք հաւաղել աղքատանոցի խնամակալ կառավարիչներին, որ այդ պատկերը վրաց իշխան Մելիքովի և ոչ թէ Լօռու-Մելիքեանի պատկերն է։ Մեկ ժամի չափ մնալուց յետոյ այդտեղ և նկիրելով մեր լուման՝ Քուջարեանցը մեկ ոսկի, իսկ ես կէս ոսկի, յօգուտ աղքատանոցի գանձարանին, հեռացանք շատ տխուր տպաւորութեան տակ։

Պայմանները դրելու ժամանակ, Հէքիմեանը խընդրեց մեզ օրը գնալ ճաշելու Մէրիէմ-Կուլիի մօտ (հնմուտ փաստաբան և յայտնի ազգասէր, ազգային ժողովի կրեցփոխանների մէկը), որը կամենում է ծանօթանալ մեզ հետ։

Վճռեցինք, որ մեզ օրը Քուջարեանցը, Ադամեանը և ես կիջնենք Նաւահանգիստ, ուր սպասիլս կը լինի մեզ Հէքիմեանը և այնտեղից նստելով շոգենաւ, կերթանք L'Ile des princes անուանած կղզին, ուր բնակւում է, ասում ժամանակ պ. Մէրիէմ-Կուլին։

Օրը գեղեցիկ էր, ծովը հանդարտ. մենք ճանապարհ ընկանք կարծեմ ժամը 10-ին առաւօտեան և ժամը 1-ին հասանք այդ կղզին։

Բայց ինչ հիանալի կղզի է, ինչ գեղեցիկ դիրք ունի, ինչ հրաշալի բուսականութիւն... Տները կարծէք փախթեած են կիպրոսի, ուրիշ անուշահոտ ծառերի, խաղողի տերևների և հազարումէկ զմայլեցուցիչ բուսականութեան մէջ։

Մ. Մէրիէմ Կուլին մեզ ընդունեց մի փառաւոր, թէև համեստ զարդարուած դահլիճում և ներկայացրեց մեզ մի քանի տիկինների և օրիորդների. դրանք ամենքն էլ նրա աղգականներն էին։

Ինքը, Մէրիէմ-Կուլին միջահասակ, վայելուչ կազմուածքի, տէր երիտասարդ մարդ էր, սուր և աչքերով։

Դահլիճում դրած էր մի դաշնամուր և կլոր սեղանի վրայ զանազան խմիչքներ՝ արաղեան, կոնեակ և այլն։

Մեր մտնելուց յետոյ, հինդ րոպէ չանցած, ներս մտաւ մի պարոն, կարճահասակ, մօտաւորապէս քառասուն տարեկան և մի երիտասարդ մօտաւորապէս 14 տարեկան։

Ամենքը հրճուանք յայտնեցին դրանց գալու պատճառով։

— Սա պարոն Զուխաճեանն է իր զաւկի հետ,— ներկայացրեց Մէրիէմ-Կուլին։

Մենք սեղմեցինք իրարու ձեռք։

«Մթթէ սա այն յայտնի հայ կոմպոզիտորն է, «Արշակ» օպերայի հեղինակ Զուխաճեանը, հարց զարթեց գլխումս. պատասխանը առացայ իսկոյն պարոնի ու նրա զաւակի արարքից։ Հայրը նստեց դաշնամուրի մօտ, զաւակը կանգնեց մօտը. մեկը սկսեց հնչեցնել, միսը երգել, սաստիկ խառատ ձայնով. մի քանի ազգային եղանակներ, նոյն Զուխաճեանի հեղինակութիւններից։

Քուջարեանցը հարցրեց երեխայի ձայնի խառատութեան պատճառը։

— Անտանելի սովորութիւն կայ մեր մէջ,— պատասխանեց Զուխաճեանը։— Ամեն մի տօն օր, ես և զաւակս, կանուխ առաւօտից ստիպուած ենք պտտիլ ծանօթ-բարեկամներիս տունը, նրանց փոքր ինչ զարճացնելու. և ահա զաւակս փոքր ինչ յոգնել է շատ երգելուց։

— Ինչպէս, չհամերեցի ես,— մթթէ դուք պարտական էք զարճացնելու ուրիշներին, երբ ինքներդ արուեստագէտ մի անձնաւորութիւն էք։

— Է՛հ, պարոն,— պատասխանեց հայ կոմպոզիտորը,— շարունակելով հնչեցնել դաշնամուրը,— դեռ այստեղից մի տասն տուն դարձնալ պիտի այցելենք. այդպէս է ընդունուած այստեղ։

Յետոյ՝ մի քանի եղանակներ ևս շտապով ածել

և երգելուց յետոյ, հայր ու որդի մեծ բարեաւ ասին ամենքին ու հեռացան։

—Այս ինչ տեսակ սովորութիւն է եղել աշխարհիս մէջ, ասացի ուսուցիչ Քուջարեանցին։

Նա ուսերը վեր բարձրացուց միայն։

Այդ բաւական չէր, մեզ սպասում էր մի ուրիշ այ անդամ սովորութեան եւ վկայ պըտնըռելու։

Մեզ հրաւիրեցին սեղանատունը, ուր սկսեցինքճաշել թէ չէ, տանտէրը, յետոյ Հէքիմեանը սկսեցին խրթին ճառաբանութիւններ անել յետոյ բոլոր սեղանակիցները դիմեցին Ադամեանին, խնդրելով, որ նա «մէկ տեսարան մը դոյէ»։

Ադամեանը, որ իմ կողքիս էր նստած, վեր կացաւ տեղից և սկսեց հազալով մաքրել ձայնը։

„Այս ինչ բան է, մըտածեցի ես, սրանք երեխ ինձ էլ «մէկ տեսարան մը» պիտի դոցել տան, իբրև ռուսահայ դերասանների ներկայացուցչի»։ Հէնց Ադամեանը բա-

Լ. Բ. Նատրակաեա

նը բաց արաւ, որ մի ինչ որ սրտաշարժ տեսարան դոցէ», ես ընդմիջեցի.

—Մենք մէջ, պ. Մըրմըկուչի,—դարձայնեց տան տիրոջը,—սովորութիւն չկայ, որ ճաշի ժամանակ հիւր դերասանին պտնաղան տեսարաններ կատարել տան։

Ասի և պինդ քաշեցի Ադամեանի ոտներդիր։

Այդ ժամանակ նա ինձ յայտնում էր և լսում, ուսաի, ներողութիւն խնդրելով, որ փոքր ինչ տակաւ է և տրամադրուած չէ, հրաժարուեց «տեսարանը դոցելուց»։

Քուջարեանցը հասկացաւ իմ նեղ դրութիւնը ու վերցնեց ով բաժակը, մի այնպիսի զարհուրելի աղղաբրական ճառ արտասանեց, որ տանկահաչքս յափշտակեցին և մոռացան Ադամեանին ու դերասան լինելու։

Նրան պատշաճաւոր կերպով պատասխանեց Երիխն զրարտուղ Հէ-

Գէորգ Զամչեան

(Կը շարունակուի)

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

ՈՒՐԲԱԹ, ՍԵՊՏ. 30-ԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ 9 Ժ.

Գրական-Գեղագիտական Սալօնի XI-րդ տարեշրջանի բացմանը ներկայ էր երկտեղ հոծ, մեծ բազմութիւն հայ և օտար մտաւորականներէ, արեւստագէտների, գրականագէտների, մանկավարժներու։ Երեկոյթը նւիրւած էր ժամանակի նոր վարդապետութեան՝ ֆուտուրիզմին և անցաւ շատ շարժուն, որ տևեց կէս գիշերից էլ անց։

Աթենացիք և օտարներն Աթէնքում սիրում էին իրենց հրապարակներում—և այն էր իրենց բան ու գործը՝ անշուշտ ազատ ժամերին—ասել կամ լսել նոր նոր բաներ։

Բրիտոնէութեան բուռն ոգեվիկ ախոյեան Պօ-

Բանկէտ Իշխան Ալ. Ով. Սումբաթով-Ուժինի պատուին Թիֆլիսում կլուբի սրգում 21 մայիսի 1916 թ.

ղոսն էլ հասել էր Աթէնք և վէճի բռնւել Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաների հետ։

—Ի՞նչ է ուզում ասել այդ սերմանաքաղը։

Ինչ որ նորօրինակ աստուածի պատմիչ է երևում։

Եւ Արիսպագոսում հարցրին նրան. «Կարո՞ղ ենք արդեօք իմանալ թէ ինչ է այդ քո նոր վարդապետութիւնը. ինչ որ առ օրինակ բան ես կաթեցնում դու մեր ականջները. կը կամենայինք գիտենալ թէ ինչ է լինելու այդ բանը։

Ու աստուածային Պօղոսը բաց ալաւ իր բերանը սկսեց իր ատենաբանի վարդապետութիւնը։ Նա կեանքի յաւուրեան ուսմունքն էր քարոզում և Նազարէթցի Յիսուսի ծանօթութիւնը տալիս։

ՈՒՐԲԱԹ, սեպտեմբերի 30-ին Գրական-Գեղագիտական Սալօնը ինձ յիշեցրեց Աթէնքի քաղաքացիների իմաստասիրական այդ հետաքննութիւնը։

Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր, հոծ բազմութիւն։ յարակից գլասենեակն ևս լիք, ու շատերն էլ ոտքի վրայ։

Օրւայ Պօղոսը քա՛ստեղծ-մարգարէ Վասիլիյ Կամենսկին էր ու աչակից նրան երիտասարդ քաջառոյգ և մերկապարանոց, կեանք ու աչքցյժ արտաշընչող հերքիւլեական կաղմուածքով Գօլդմիդը։ Ունէին նրանք ևս իրենց իւղաբերները, նոր վարդապետութեան վաղւայ օրւայ, ֆուտուրիզմի, արշալոյսը ափառող ու ծաւալող պայծառ պատանուհիք։

Նախադռանը վրայ երևաց հայ կեանքի հրապարակի վրայ ֆուտուրիզմին յարած նախակարապետ, եթէ չեմ սխալւում այդպէս որակիւռվս, գրչի արևմտին նուիրւած Կարա-Դարվիշը։ Այս լուսաւորը ևս իւ արբանեակն ունէր։

Կարա-Դարվիշ հռչակուած էր նոր լոյսի, վաղւայ պարզ ու պայծառ կեանքի, ծագումը։ Սեփհան ուժերը, ժողովրդի իր կեանքից արտադրող արժէքները, Աբովեաններն ու Պօշեաննները, աւելի հասկանալի են իրան—ժողովրդին—աւելի պիտի գնահատուին, քան Շէքսպիրները։

Այդ է յառաջդիմութիւն, ազատ զարգացող կեանքի ուղիղ ճամբան։

Դահլիճին այդ օրը նախագահող պարոն Ս. Թառայեան հրաւէր կարդաց պ. Կամենսկիին իր խօսքն ասելու։

Վեր կացաւ սա, շիտակ, առոյգ, կայտառ, հրաշունչ, իսկ որ կայծակնաշուրթն մի մարդարէ։

Իւր խօսքն իղաւ արևելքը, լուսոյ առաւօտը, արեգական երկիրը, լոյսը դէպի արևմուտք ճառագայթեցնող աշխարհը սկզբում, կեանքը բեղմնաւորողը, արեւստ ծնուցանողը, պարզ, առոյգ, կինսուրախ, ստեղծագործող զօրութեան ակունքը։ Ինութիւնը հաճարի կայծով օժտել է անհատին։ Այդ կայծը խարոյկացնելը անհատի շնորհքից է։ Միտքը մտքին, շնորհքը շնորհքին չէ տրկացնելը, պարզունակ բնական կեանքը պաճուճական արուեստականար վիճակին չենթարկելը, թօթափել այդ չինուս կեղևանքը, ազատութիւնը և ինքնաբուխ կեանքը վերադարձնել անհատին, Ապոլոնեան պեղեցկութիւնը և հերքիւլական քաջակազմութիւնը տալ մարմնին՝ կորստեղով սրան ճնճիմացնող բոլոր կապանքները, խորտակելով կաշկանդող բոլոր շղթաները, պարզասուն առոյգ ու առոյգացած մէջ վերարծարծելով ստեղծագործող միտքն ու հոգին, հերքել վանել տխուրն ու մռայլը, կեանքը բորբոսնեցնողը, և նոր սկսուածքով պատրաստել զարթն ու խնդաւէտը. այլ ու աւելի ճոխը քան այդ լաւագի ջերմութեամբ արտասոսող խօսքը այդ կրակոտ բանաստեղծ մարգարէի։

Ասեմ։ Նա դրւատից պարսկական գորգը, արեւելեան ստեղծագործող հասարակ ձեռքի հանճարարուեստ այդ անբարբառ բանաստեղծութիւնը, աչխարհի աչքը ամենուրիք իւր վրայ բևեռող արուեստի այդ սքանչելակերտը։ Նախքան Ռաֆայէլ՝ պարսկական գորգին՝ հրաշալին, ըստ մեզ, Ռաֆայէլ։

Դադարից կամենսկին, խօսքն առաւ Գօլդմիդ։ Սա ամենևին խօսելու էլ պէտք չունէր, վաղւայ օրը քարոզելու համար. նա իւր առոյգ անձովը տեղնուտեղը առողջութեան, քաջակազմութեան, արտաքրող ամենաբեղուն ուժի, անհատին շնորհւած բնական ձիրքի, ստեղծագործելու կոչւած անհատի կենդանի, պերճախօս քարոզն էր, կարծես նա կարող էր երկաթ ծամել և մեր Տօրք Անգեղեայ դիւցազնի նման որձաքար վէմը եղնգով տաշել և նրա վրայ արձիները փորագրել։ Առոյգ ոյժի և կորովութեան բանաստեղծութիւնը գտաւ այդ անձի մէջ՝ ունկնդրութեանը հաղորդ նաև իշխան Նակաշիձէն, և ժամեցաւ նրանում ողջունելու ֆուտուրիզմի, վաղւան օրւայ մարմնացումը։

Էլի ասելիք շատ է մնում այդ երեկոյթից, բայց երկարութիւնից երկիւղ ունիմ տաղտկութիւն ծնուցանելու։

Ա. Մ. Նզհդեան

ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

Զը նայած նրան, որ Դրամատիկ. Ընկ. ընդհ. ժողովները ներկայ սեզոնի համար որոշ հրահանգներ չը տւին, այնուամենայնիւ սեզոնը բացւեց շատ հաճելի ֆիզիօնոմիով։ Դրամատիկ. Ընկ. խմբի մէջ են տ. Սիրանոյշ, պ. պ. Սևումեան, Փափազեան, իսկ տ. Մայսուրեանը պ. պ. Աբէլեանի, Ալիխանեանի, Զարիֆեանի, Յարութիւնեանի, Վրոյրի հետ կազմել են առանձին ընկերակցութիւն «Գուրգէն» անունով։ Ըստ սովորականին՝ Դրամատիկ. Ընկ. իր ներկայացումները տալիս է երկուշաբթի օրերը, իսկ Գուրգէն ընկ. հինգշաբթի, երկուան էլ Արտիստ. ընկ. թատրոնում, Դրամատիկ. Ընկ. սովորական, իսկ Գուրգէն Ընկ. բարձրացրած գներով։ Հասարակութիւնը երկուսի ներկայացումներին էլ յաճախում է շատ սիրով, միշտ լցնում թատրոնը. բացակայում է Սօլօլակը։ Գեղանիօրէն են ընթանում և երկու ընկերութիւնների ներկայացումները։ Պէպօն տրւեց սքանչելիօրէն փառահեղ, նկարիչ Շարրաթչեանի դեկորները մենք շատ հաւանեցինք։

Փափազեան և Աբէլեան մի շարաթւայ ընթացքում խաղացին Օթելլօ, երկուան էլ լաւ։ Սևումեան խոշոր ոյժ է և մենք սրտի մեծ գոհունակութեամբ տեսնում ենք արուեստը մշակելու համար լուրջ աշխատասիրող։ Տ. Սիրանոյշ, պ. Աբէլեան արդէն այն հազր արեգներն են, որոնց շուրջ պար են բռնում մեկը միւսի ետևից պսպղին տուող, ապա օր օրի փայլ ստացող ապագայ բեմական աստղերը։

Յո երթաս պիէսը որ տրւեց հոկտ. 24-ին տ. Իղաբէլլա Փալանթարի մասնակցութեամբ, կատարելապէս սոճական էր։ Զքնաղ արտիստուհին պահել է բեմական իր քնքուշութիւնը, սիրուն, մտածւած միմիկը և դերազանցեց այդ երեկոյ ինքն իրմեն։

Տ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍԿԶՕՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Գարնան վերջերը Թիֆլիս եկան երկու նշանաւոր բեմական գործիչներ՝ իշխանուհի Լ. Բ. Բարեաթինսկայա-Եաւորսկաեա և իշխան Ալ. Իվ. Սումբաթով-Յուժին։ Տ. Եաւորսկաեա, որ արդէն շաբրտեց իշխանուհի տիտղոսը և դրամատուրգ իր ամուսին իշխան Վ. Վ. Բարեաթինսկու հետ խղել է ամուսնական իր կապերը և նորից միայն ըստացել ապաւարդան Թիֆլիզում հանդէս եկաւ իր բեմերտուարով, որ վերջին ժամանակներս խաղում է դիցուհին Լոնտոնում իր յատուկ թատրոնում։

Վարդուհի-Շուշան Պէպօյի մէջ

Իշխան Յուժին-Սումբաթով հանդէս իջաւ իր յատուկ ստեղծագործութիւնով և համայեց Թիֆլիսի հասարակութեան։ Իր Դաւանանութիւն ալիէսի մէջ Օթար-բէկի դերը կատարից ինքը մի քանի անգամ։ Հայրենի Թիֆլիս քաղաքը ջերմապինա ցոյցեր արաւ իր հարազատին։ Այդ օրերը Թիֆլիսի թատրոնասէր հասարակութիւնը ապրեց բեմով Տ. Նազարեանի նախաձեռնութեամբ, մայիսի 31-ին, Թիֆլիսի ժողովարանի այգում դրամատուրգարտիստի պատւին տուեց մի փայլուն բանկէտ, որին ներկայ էր Թիֆլիսի մտաւորականութիւնը իր հաստատութիւններով, Թիֆ. քաղ. վարչութիւնը ամբողջ կազմով և քաղաքագլխով, թատրոնների (արք. արտիստ., հայոց) դերասանները, վարչ. անդամներն ու գեկավարները, կայս. երաժշտ. ընկ. ներկայացուցիչներ. խմբագիրներ (Մ՚շակ, Հորիզոն, Տարազ, Кавк. Слово, Тифлиск. Листок), հայ գրողներ՝ Շիրվանզատէ, Յովհ. Թումանեան Հայլն, Հայլն, մօտ հարիւր հոգի։ Սեղանի կառավարիչն էր քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, իսկ օգնականը Кавк. Сл. հրատարակիչ Իսայի Դօլուխանեան, երկու պետ հսհատորներ։ Մի շարք բաժակաճառեր արտասանեցին բացի վերոհիշեալներից և հայոց թատր. խորհրդի անդամ ս. վ. Մամուլեան, դերասանուհի Իրենա, դերասան Պալօնակի, քաղ. վարչ. անդամ պ. Ժուլուլի, Հ. Առաքելեան, Միք. Վարանդեան, Շիրվանզատէ, Յովհ. Թումանեան, Յովհ. Տէր Գրիգորեան, դերասաններ Յարութիւնեան, Միրզաեան։ Ալ. Խատիսեան, Իս. Դօլուխանեան իրանց փայլուն ճառերով հմայում էին ունկնդիրներին։ Ճառերին պատասխանում էր թանկագին հիւր իշխան Սումբաթով-Յուժին զգացած և նոյնպէս պերճ։ Հանդէսը տեւեց մինչև 5 ժամ առաւօտեան։ Բանկէտին ներկայ էր և կովկասեան հերոս ծերունազարդ իշխան Օրբելեանին։ Նստած էր ասիական երաժշտութիւն, ս. Վերգինէ Մամուլեան ու դերասան Յարութիւնեան իրանց չքնաղ պարով հիացրին ամենքին։ Յրեկոյց առաջ՝ նշանաւոր դրամատուրգ-արեւստագէտը, շրջապատուած ներկայ աղջիկներով, լուսանկարուել հրաւիրուեց։

Էֆիմիա—ՅԱՄՄԻԿ,
Զիմզիմով—Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Պէպօյի մէջ հակտ. 3-ին Սրտիատ.թատր.

Զմեռնային սեզօնը այս տարի բացուեց Արտիստ. ընկ. թատրոնում երկուշաբթի, հոկտ. 3-ին, Պէպօ-ով, նուիրուած Գաբրիէլ Սունդուկեանի և Գէորգ Զմշկեանի յիշատակին։ Այս ներկայացման համար Հայոց Դրամատիկ. Ընկ. Մորհուրդը հրաւիրել էր մեր բազմավաստակ դերասանուհի տ. Վարդուհու, դերասաններ՝ Յով. Տէր-Գրիգորեանին ու Տէր-Դաւթեանին։ Հանդիսաւոր այս ներկայացման՝ յիշեալ երեք արեւստագէտները գերազանցիցին մէկը միւսին իրանց աքանչելի խաղով։ Յովհ. Տէր-Գրիգորեան, որ կատարում էր Զիմզիմովի դերը, ապացուցեց թէ ինչ նրբութեամբ է ուսումնասիրել ստանձնածը։ Ի դէպս, մի՞թէ ժամանակը չէ պ. Յովհ. Տէր-Գրիգորեանի բեմական գործունէութեան յոբելեանը, որի յիսունամեակը 3 տարի առաջ լրացաւ, դէթ այս տարի կատարինք։ Ժամանակին մենք դրինք հրապարակի վրայ այս հազուագիւտ յիսնամեակի տօնախմբութիւնը, սակայն պատերազմը սկսուեց և առժամանակ մենք յետաձգեցինք մեր առաջարկի իրագործումը։ Այժմ նորից հրապարակի վրայ ենք դնում և հրաւիրում իրագործել, կազմելով յատուկ մասնաժողով։

Կիրակի, հոկտ. 1-ին, Վանքի մայր տաճարում Գաբրիէլ Սունդուկեանի և Գէորգ Զմշկեանի յիշատակին հոծ բազմութեան ներկայութեամբ կատարուեց հանդիսաւոր հոգեհանդիստ Էրիվանի վարդապետ եկեղեցում այսպէս խօսեց. «Նրանց՝ որ բորբոք հայրենասիրութեան կրակն հոգու մէջ, տաղանդի վառ լապտերով հայ կեանքի. հայ հոգիների աշխարհում որոնուածներ արին. Նրանց՝ որ բեհեզածածկ և կերպասաւոր հայ մեծատան հարստուի տակ շարաւալից խոցեր գտան և սրտացաւ վարպետի նշտարով քանդեցին այն խոցերը, որ շարաւր հոսի, թարախը մաքրի և հայ կեանքը չը վարակի, չը հիւծի ու լուծի. Նրանց՝ որ Զիմզիմոնիների ու Զամբախոնիների երեսից արդարութեան դիմակները վար առին և նրանց հոգու խեղճութիւնը հանդէս դրին. Նրանց՝ որ արհամարհանքի գուրը նետած, անհատասարութեան երեսից հալածական ու ազնիւ խեղճերին՝ Գիքօրին, Շուշանին, Պէպօին, կէկէլին կակուլն ու նմաններին իրենց եղկելի կացութիւնից հանելով՝ մարդկանց շարքը դրին. Նրանց՝ որ իրենց վսեմ առաքելութիւնը իրենց աշակերտներին ու հետեւողներին, գրչի և բեմի հեղինակներին ու դերասաններին կտակեցին. Նրանց՝ Գաբրիէլի ու Գէորգի քաղցը ու անմեռ յիշատակին ենք նուիրում այսօր մեր սրտի սէրը, մեր մըտքի գովքը. մեր հոգու ներողն ու օրհնութիւնը։

Գիզո—Տէր-Դաւթեան
Պէպօյի մէջ

Գէորգ ու Գաբրիէլ՝ մէկ մէկու նման, հաւասար սիրելի, հաւասար անհման։ Մէկն ստեղծագործող, միսը գործադրող, պատկերաւորող վիհը, գեղեցիկը, ճշմարիտը, բարին։ Նրանք հայ բեմի հիմքն ու զարդը, հայոց լեզւի վարժապետներն ու տարածողներն էլ եղան։

ՖԵԼԻԵՏՕՆ

ԱՆՏԱՓՕՂՔԻՉՄ

Ճիշտն ասած ես խիստ զարմացայ, երբ հոկտեմբերի 14-ին Գոլովինսկի Պրօսպեկտի վրայ, կէս օրին անմեղ զբօսանքիս ժամանակ, յանկարծ պատահեցի իմ սիրելի հայրենակցին—պ. Զաչուլրազեանին։

—Այդ ո՛ր խաղից, պ. Զաչուլրազ, դուք ընկել էք այս տեղ օր ծերութեան, ինչ կայ, ինչո՞ւ էք եկել Թիֆլիս։

—Իսկի, սիրելիս, այս անիծաեալ ոսկրացաւս օրէցօր խստում է, բժիշկները խորհուրդ տուին ինձ մի քանի օր լողանալ Թիֆլիսի ծանրային բաղնիքներում և ես ահա երկուրդ օրն է այստեղ եմ։ Լաւ է, որ քեզ պատահեցի, թէ չէ ես արդէն մինակութինից խիստ ձանձրացել եմ. գնում եմ բաղնիս և գալիս տուն. էլ ոչ մի դարձ չունիմ և ես չը պիտեմ թէ ինչպես պէտք է մխիթարեմ ամենաբեզարեսաթիվը, որ բժիշկները նշանակել են իմ լողանալու համար։ Է՛, դու տես ինչպէս են անցնում օրերդ, երևի պլուա քրելու ժամանակ չես գտնում. երբևիցէ գոնէ սրբի ինձ մօտ, պատրաստ կը լինես, մի բիչ զրոյց կանենք, օրնեբս կանցնի. տեսնում եմ դու այժմ ուր որ գնում ես։ Տէ՛ս, երեկոյեան անպատճառ գաս, կը սպասեմ։

—Ես անպատճառ կը գամ, պ. Զաչուլրազ, բայց ոչ թէ քեզ մօտ ճաշելու, այլ քեզ ես տանելու Գեղագ. Մայրոնը իմ բարեկամ պ Տիլլան Նազարեանը ինձ հրաւիրել է այս օրուայ jour fixe-ին, որը նուիրուած է հայ-վրացական յարաբերութիւնների խնդրին. կարծում եմ դա քեզ համար հետաքրքրիր կը լինի, չէ որ մենք յաճախ ենք զրուցել ե. ում այդ մասին։

Պ. Զաչուլրազեանը խօսք արեց և մենք բաժանուեցինք։

Նշանակուած ժամին մենք արդէն պ. Նազարեանի Մայրոնումն էինք. նա իր սովորական բազդատութեամբ ընդունեց մեզ և հրաւիրեց թէյի։ Պ. Զաչուլրազեանը մի քիչ տեղ ուշում սրից, ամաչեց, քանի որ նրան սպասիրելիակ էր թուում, որ չորորի այսպիսի պահանջների ժամանակ. հասարակական ժողով գնացողները համաձայնեցին մէկի հիւրասիրութիւն ընդունելու համար, որ ես քանի որ քաղաք ոտք չէ դրել. նախազգում եմ պ. Նազարեանին, դրանում որ նա իր բնատուրմներ էլ փոխարը չէ, մէկուկ չորորի ֆունտ պատրաստ 10 րուբլի։

Հիւրասիրելուց յետոյ մենք անցանք դահլիճը, ուր կամաց կամաց ժողովում էին հրաւիրածները։ Դա մի հետաքրքրիր հասարակութիւն էր, բաղկացած ամէն տեսակ ճաշակների, դասակարգի և սեռի ներկայացուցիչներից, սկսած արուեստի տաճարի սպասաւորներից, մինչև բանուորական դասի ներկայացուցիչները, գրչի և մատիտասպասաւորներից, մինչև գործարանի և խանութի աշխատաւորը։

Ժողովի բացող և կառավարիչն էր, ի հարկէ, պ. Հ. Առաքելեանը։

Թէև վրացիներից շատերն էին հրաւիրած, բայց բաւական էին գալ նրանցից ուղիղ մի զոյգ և մի կնոջ հոգի, ոչ աւել և ոչ պակաս։

Ինչպէս հայկական բոլոր ժողովներն առհասարակ, այդ ժողովն ևս անցաւ բուռ ականջին կենդանի, ևթէ չասենք աղմկայոյզ։

Պ. Զաչուլրազեանը, նստած իմ կողքին, իրրև նոր մարդ, ամենայն հետաքրքրութեամբ հետևում էր ճառախօսներին և երբ նրանցից մէկը նրա սրտին մօտ մի բան էր ասում, նա կամաց կմկմում էր ձախ թևս. իսկ երբ մէկի յայտնած մտքերը նրան գոյ չէին գալիս, նա թեթև ցընցում էր իր նստած տեղում և արտում ձախ ոտքս, որի ճկոյքի մազրի ցաւից ևս ևս ուժգին խռովահարում էի ինձ նստած տեղս։

Սակայն մի բան ինձ գոյ չեկաւ պ. Զաչուլրազեանի մէջ այդ երեկոյ. դա ժպտերի այն երկու արամադրօրէն միմեանց հակառակ դրութիւնն էր, որ այդ երբևիցէ ևս նկատելի այդ միջոցներում և հանդուգնակամ մարդու մէջ և ահա թէ ինչպէս։

Երբ այնպէս դիպուածով խօսում էր պ. Թ. և պերճախօս կերպով ապացուցանում, որ հայերն ու վրացիների մէջ աշխատանքների գոյութիւն չունի, պ. Զաչուլրազեանի դէմքը փայլում էր գոյ-ձաւ և նա կոքոս բերով շշնջում էր.

—Ի հարկէ, ի հարկէ։

Սակայն ահա սկսեց հանդարտ և լեզմ խօսել պ. Ս Թ-ն և գոյ տալ, որ յիրաւի անտարբերքի գոյութիւն ունի ոչ միայն հայերի ու վրացիների մէջ, այլ նոյնիսկ հայերի ու հայերի մէջ. նրա խօսքը հետաքրքրեց և մի քանի րոպէ ուրիշները ևս, այդ ժամանակ պ. Զաչուլրազեանը մոռաց գլուխ դնել, նա կասաց աջերդ տակը մոդրը և կրկնեց

—Ի հարկէ, ի հարկէ։

Եւ համբերութիւնից դուրս եկայ և ասացի.

—Այդ ինչպէս է որ, պ. Զաչուլրազ, դուք երկու դէպքում ևս համաձայնեցիք. Մէկը նրա բաղձանքը հօ չը զարձար դիմաբրիս, որ ամեն խօսքի էլ ասում էք այո, քո ասածն է. ուրեմն պարզ ասէք վերջապէս, թէ այդ անիծեալ անտարօնիզմը դոյութիւն ունի հայերի ու վրացիների մէջ, թէ ոչ։

—Այո, նա և կայ և չկայ —ասաց հանդարտութեամբ պ. Զաչուլրազեանը և ահա այն էր պատրաստում էր բացատրել իր միտքը, որ մեր երկուսիս ուշադրութիւնը գրաւեց մի ուրիշ հետաքրքրութիւն—կինն էր թէ օրիորդ չը պիտեմ և նա կոքոս բերով սոսկից լսել, խոստանալով այդ մասին խօսել ճանապարհին։

Յիրաւի խօսքը գեղեցիկ էր և ոչ միայն իր արտաբերմամբ, այլ և պերճախօսութեամբ ու իր ազնիւ ոգևորութեամբ։ Նա լսել անդամ չէր կամենում անիծեալ անտագոնիզմի մասին և երբ ուրուցումում էր ժողովականներին քիչ կրկնել այդ չարագուշակ խօսքը, քանի որ այդ կարող էր ընկնել իր աշակերտ-աշակերտուհիների ականջը և վարակել նրանց. այն ինչ ինքը, թէև հայուհի բայց կաթոգամով Ռուսաստանից և մի ուրիշ վրացի բանասաեղծ, այնպէս է ոգևորել, որ պատրաստ է գրկել և համբուրել չքնաղ Վրաստանը։

Դանդիթը գրգռած ծափահարութեամբ և հայրենասէր Զաչուլրազեանը, մոռալ շարժելով գլուխը, շշնջաց ականջիս.

—Իսկ արդեօք կը գտնէ Թիֆլիսում մի վրացուհի, որ նոյն ջերմութեամբ համբուրէր մեր գժբաղդ Հայաստանը։

Սակայն ճառախօս տիկին թէ օրիորդը գեռ չէր վերջացրել, և երբ գանդիթը հանդարտուեց, նա աւելի ոգևորուած բացականչեց, որ ամենայն սիրով պատրաստ է համբուրել ոչ միայն գեղեցիկ Վրաստանը, այլ և ամէն մի վրացու։

[illegible]

Ես զգացի սակայն, որ բարեկամս իր այդ երկրպիմի կատաղութիւնը արտայայտում էր իր սրտի խայթն ու դառնութիւնը և այդ բաղձին ինձ թւաց, որ չքնաղ հայուհին, այնպէս ջերմ համբուրելով գեղեցիկ Վրաստանն ու բոլոր վրացիներին, ոչ թէ պրատնով կարողացաւ ջնջել մր մէջ եղած անտագոնիզմը, այ աւելի բորբոքից նրան։ Մակայնոչ նահանջի կամ աւելուրեան կրակով, այլ խանդի...

—Դու նկատում ես մի բան— ասաց բոլորով կողքս ։. Զաչուլրազեանը,—ինձ թւում, թէ մի[illegible]ը զարձել սկսում է հետաքրքրականանալ, իսկ մեր[illegible] հայրենակիցները ուզում է կրկնել առաջ տարի աւազ կատարուղ կոմիդիանները...

Բարեկամիս այդ խօսքն ակնարկը ևս առիթ տուց մեզ մէջ մի քիչ վիճաբանութեան որը սեղ գրկից միւս հետաքրքրութեան լսելու հնարաւորութիւնից, և երբ նախազանը վակեց ժողովը, առանց մի որոշ եզրակացութեան գալու, մենք շնորհակալութեամբ սեղմեցինք սիրալիր տանտիրոջ ձեռքը և դուրս եկանք սալօնից, մեր գրոյցների շարունակութիւնը փողոցում վերջացնելու։

—Դէհ, ասացէք, պ. Զաչուլրազ, դուք ինչու՞ համաձայնեցիք, երբ այն ատելութիւնը հազած պարոնը պնդեց, որ անտագոնիզմ գոյութիւն չունի, իսկ միւս ակնոցաւոր պարոնն էլ, որ ճանապարհորդել է ամբողջ Վրաստանում նոյնը հաստատեց։

—Սիրելիս—սկսեց պ. Զաչուլրազեանը կիսայանդիմանական տոնով,—երբ դուք ուղում էք փոնել մէկին ասածները, նախ պիտի նայէք թէ ով է նա և ինչի վրայ է հիմնում իր ասելիքը։ Այն ատելութիւնը պարոնը ինձ թւաց բանուրական դասի մէկ ոչ նկրկայացուցիչ, գոնէ այն շրջանների ազգերութեան տակ ապրող. իսկ հիմա ում համար պարզ չէ, որ ամբողջ աշխատաւոր գասակարգը նրկրների աշխարհի կրկին է ապրում, որ[illegible] ժամանակ և տնտեսութիւն չունի պատրաստ գիր բորբոքուելու նա այնպէս հետաքրքրուած է[illegible] ապրելու հնարքներով ու տեսնելով, որ[illegible] հնարքներով ոչ միայն[illegible] վերջացնելու[illegible] ամբողջ գասակարգը[illegible]

Նախն օր, բայի միջա՛ի օրերդ
«606»-ի եւ «914»-ի հեղուսկի բժշկական
խորհրդակցական մա. 11—12 ր.
ՆՈՐՈՍԿՈՒ

Ի. Ա. ՂԱՀԱՍԱՐՅԱՆՑ—11—12 ր. վիրաբուժական ընդունարան
տան (սիմֆոնիա) հիւանդների համար:

Ի. Գ. ՈՂՈՍՈՒԹԵՑՑ—9 30—2 ր. հիմնարկ, դպրոց և բժշկարան
հաստատութ. և ձեռնարկատ.

Ը. Ը. ԲԵՂՈՍՈՎԱՅ—11—12 ր. ախտ. հիւանդ. կին և մանկ
հիւանդների:

Ա. Գ. ԿՈՐՈՑՑԱՑՑ—12—1 ր. հիմն. հիվանդ. շտաբ. բժիշկ
հաստատութ. և ձեռնարկատ.

ԲԺՇԿՈՒՀԻՆ

Ա. Ղ. ԻՈՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.

Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.
Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.
Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.

Ֆիրման Կոյտ ՅԵՐՈՒՍԵՂԵՄԻ ՂԱՐԱՊԵՏ և տարեվերջ Ցան
ասի ծանր ծխախոտների մարքան իր հայ հաճախորդներին
ծխատեր մաղթել:

Տպագրիչ „ՕՏՈՒՈ“ Գիտության
Ըն. ՅԵՒԵՆ. ԱԵՒԱՅԻ.

ՎԱՂՓԱՐԱԿ Ի. ԽԱՉԻԿ
ՀԱՅԱԳԱՒԱՌ ՀԱՒԱՔՈՒՄ ՂԱՁՈՒՄ
Հիմնուած 1880 թ.
(Կանգնած Հօրեղբօր անունով)
Նախն օր, բայի միջա՛ի օրերդ

«606»-ի եւ «914»-ի հեղուսկի բժշկական
խորհրդակցական մա. 11—12 ր.
ՆՈՐՈՍԿՈՒ

Ի. Ա. ՂԱՀԱՍԱՐՅԱՆՑ—11—12 ր. վիրաբուժական ընդունարան
տան (սիմֆոնիա) հիւանդների համար:

Ի. Գ. ՈՂՈՍՈՒԹԵՑՑ—9 30—2 ր. հիմնարկ, դպրոց և բժշկարան
հաստատութ. և ձեռնարկատ.

Ը. Ը. ԲԵՂՈՍՈՎԱՅ—11—12 ր. ախտ. հիւանդ. կին և մանկ
հիւանդների:

Ա. Գ. ԿՈՐՈՑՑԱՑՑ—12—1 ր. հիմն. հիվանդ. շտաբ. բժիշկ
հաստատութ. և ձեռնարկատ.

ԲԺՇԿՈՒՀԻՆ

Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.

Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.
Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.
Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.

ՎԱՂՓԱՐԱԿ Ի. ԽԱՉԻԿ

ՀԱՅԱԳԱՒԱՌ ՀԱՒԱՔՈՒՄ ՂԱՁՈՒՄ

Հիմնուած 1880 թ.

(Կանգնած Հօրեղբօր անունով)

ՆՈՐՈՍԿՈՒ

Նախն օր, բայի միջա՛ի օրերդ

«606»-ի եւ «914»-ի հեղուսկի բժշկական
խորհրդակցական մա. 11—12 ր.

ՆՈՐՈՍԿՈՒ

Ի. Ա. ՂԱՀԱՍԱՐՅԱՆՑ—11—12 ր. վիրաբուժական ընդունարան
տան (սիմֆոնիա) հիւանդների համար:

Ի. Գ. ՈՂՈՍՈՒԹԵՑՑ—9 30—2 ր. հիմնարկ, դպրոց և բժշկարան
հաստատութ. և ձեռնարկատ.

Ը. Ը. ԲԵՂՈՍՈՎԱՅ—11—12 ր. ախտ. հիւանդ. կին և մանկ
հիւանդների:

Ա. Գ. ԿՈՐՈՑՑԱՑՑ—12—1 ր. հիմն. հիվանդ. շտաբ. բժիշկ
հաստատութ. և ձեռնարկատ.

ԲԺՇԿՈՒՀԻՆ

Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.

Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.
Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.
Ա. Ղ. ՀԱՍՀՈՑԿԱՑ—6—7 ր. կուսից և. ու վիրաբուժական
Ը. Ը. ՐԵՂԻՈՎԱՅ—6—7 ր.

Ֆիրման Կոյտ ՅԵՐՈՒՍԵՂԵՄԻ ՂԱՐԱՊԵՏ և տարեվերջ Ցան
ասի ծանր ծխախոտների մարքան իր հայ հաճախորդներին
ծխատեր մաղթել:

Տպագրիչ „ՕՏՈՒՈ“ Գիտության
Ըն. ՅԵՒԵՆ. ԱԵՒԱՅԻ.

ՏՂԱՅՈՑ ԽՈՀԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒՎԱԾՔ

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

ՖԻՖԻՆՈՎԻՉԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՊՈՒՐՆԱՅԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՊՈՒՐՆԱՅԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՊՈՒՐՆԱՅԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՏՂԱՅՈՑ ԽՈՀԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒՎԱԾՔ

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

Ա. ՓՓՈՒՆԻՈՒ

Ամէն օր, բայց միայն երեկոյեան ժամ 11—12-ին, ընդունում է հիւանդներ իր մասնաւոր բնակարանում:

ՖԻՖԻՆՈՎԻՉԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՊՈՒՐՆԱՅԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՊՈՒՐՆԱՅԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ

ՊՈՒՐՆԱՅԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՄԱՐՔԱՆ